№ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

«Աղբիւրի» գրականական տարեգիրք ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ
Տարեմուտի երեկոյին . . . . . Դ. Աղայեանց։
Քիչ է, քիչ է (հէքիաթ) . . . . . « «
Մտերիմներ (պատկեր)
Կաղնիին տակի խոզը (Կռիլովից) . . . . . Գ. Արքեպ. Այվազեան։
Մարտին Լուտեր (Թարգմ.) . . . . . Փ. Վարդանեան։
Աշխատաւորին (Բիւրգերից) . . . . . Բ. Թադէոսեանց։
Կոյրերի և խուլ ու համրերի կարեկիցները . . . Ամբրոս։
Նոր տարի (բանաստեղծութիւն) . . . . . Յ. Յովհաննիսեան։
Մենաքէմ Դամաղացու պատմութիւնը (Վ. Կոլէնկոյից) . . . . . Յ. Յովհաննիսեան։
Կովկասեան տիպեր (պատկեր)
Հակապատկեր (Օմուլեվսկուց) . . . . . Աղ. Ծատուրեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան զրոյցներ։ Աչք և տեսողական պատրանքներ . . . . . Խաչիկ։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Մոզաիկա ԺԲ. . . . . Ն. Տէր-Աւետիքեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի օրիորդի հերոսական սիրագործութիւնը։ Հսկայական ստամոքս։ Պարսկաստանի կարգերը։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Հաւկիթի գործարան։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Խնդիր։ Հետաքրքիր թիւ։ Շախմատ։ Հանելուկներ։ Խաղ։ Շուտասելուկ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Վեցերորդ շրջան

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Յ. Յովհաննիսեանին . . . . . Հ. Դ. Մ. Ալիշան։
Նոր բանաստեղծ . . . . . Ս Մանդինեան։

ԽԱՌՆ ԼՈՐԵՐ

Շնորհակալութիւն։ Մարկաներ։ «Աղբիւրի» բաժանորդագրութիւնը։ «Աղթամարայ Ծովակ»։ «Երաժշտական Հայաստան»։ Այրի տ. Արարատեան։ Նոր Հանդէսներ։ «Աղբիւրի» սրբիմիաները։ այր Աթոռի վերնշինութիւնը։ Խմբագրութեանս ստացած նոտաներ եւ գրքեր։ «Արարատ»։ «Աղբիւրի» նուիրողներ։ «Արաքս»։ «Արութիւն եւ Մանուէլ»։ Յովհ. Յովհաննիսեան։ Գաբ. արքեպիսկոպոս։ Մ. Հ. Ուս. հրատարակութիւնները։ «Աղբիւրի» Պատասխանները։ Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՁԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է.

«Աղբիւրի» անցեալ 87 և 84 թ. ամբողջ №№-ից դեռ մնում են խմբագրութեանս մէջ և ծախվում են դպրոցական և ընտանեկան գրադարանների համար։ Բացի այդ խմբագրութեանս մէջ վաճառվում են երեխաների ընթերցանութեան համար պատկերազարդ գրքեր։

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ «ՄՇԱԿԻ» *տարեկան գինը* 10 *ռ. է, վեց ամսուանը* 6 *ռ.։*

Գրուել «ՄՇԱԿԻՆ» *կարելի է* ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաքօնսկայա և Բազարնայա վոզոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրուելու համար սկսած է դիմել հետևեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». *Իսկ արտասահմանից.* Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբ.-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀԱՅԱԲԱԹԵԹՔ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՄԻԵՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ, ԵՒ ՄԻԵՒՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Տարեկան գինն 5 *ռ. կէս տարուանը* 3 *ռ.*

Օտարազգացիք դիմում են՝ Тифлисъ Редакція „Арцагавкъ". *Արտասահմանից՝* Tiflis Rèdaction, de journal „ARDZAGANC".

Խմբ.-հրատ. Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՐԱՐԱՏ

Կրօնական, պատմական, լուսաւորական ամսագիր.

Ներկայ 1888 *թուականին բովանդակութեան եւ դիրքի կողմանէ «Արարատը» ենթարկուելու է փոփոխութեան։* Տարեկան գինը *Ռուսաստանում* 4 *ռ.։*

Հասցէն՝ Св. Эчміадзинъ, Ред. „Араратъ".

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ", на 1888 годъ.

Успѣхъ „Тифлисскаго Листка" въ первый годъ изданія его нами побудилъ насъ значительно увеличить форматъ газеты.

Несмотря на увеличеніе формата газеты до размѣровъ настоящаго номера, сопряженное съ большими расходами, цѣну на газету оставляемъ прежнюю.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

Съ доставкой въ Тифлисѣ: На годъ 3 р. *Съ пересылкой для иногородних*ъ на годъ 5 р.

Подписка и Объявленія принимаются исключительно въ конторѣ редакціи „Тифлисскаго Листка", на Барятинской улицѣ, д. Ротинова.

L'AMI DES ENFANTS ILLUSTRÉ OU L'ÉDUCATION

A l'Ecole et dans la Famille.
Directeur: l'Abbé Roussel.

Neuvième année; abonnements un an: 10 fr. Etranger, 12 fr. Un numèro, 30 centimes. Administration, 40, rue La Fontaine, Paris-Auteuil dépot: 15, rue Fékou (près saint-Sulpice) Paris.

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ. տարեկան գինը 4 *ռ.։ Հրատարակվում է Պետերբուրգում. տարբերելու կարելի է «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը։*

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարէնը լոյս է տեսնում 12 համար, 3—4 տպագրական թերթից իւրաքանչիւր համարը։

Ներկայ 1888 թ. դիտաւորութիւն կայ խիստ ընդարձակել «ԱՂԲԻՒՐԻ» բ. բաժինը, իսկ ա. բաժինը պիտի աշխատենք, պահպանելով ամսագրի բուն նպատակն ու ուղղութիւնը, դարձնել մի պատկերազարդ հանդէս փոխարինող շքեղ հրատարակութիւն։

«ԱՂԲԻՒՐԻ» 1888 թ. I. պրէմիան՝ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ էֆիկտնի օլէօգրաֆիա, արդէն թէ թիֆլիզում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան՝ի ցոյց բաժանորդներին։ Այս պատկերը կարող է ամենաշքեղ հիւրասենեակները զարդարող պատկերներից մէկը լինել։ 1888 «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդ գրուողը հէնց խսկոյն կըստանայ այդ պրէմիան բաժանորդ գրուելուն պէս։

II. Պրէմիան՝ մի ԳԵՂԵՑԻԿ ԳԻՐՔ։ Սա կուղարկուի բաժանորդներին Զատկուայ №-ի հետ։

«ԱՂԲԻՒՐԻ» 1888 թ. III. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի յայտնի «ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎԱԿԸ» վիճակ կըդցուի «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին, ներկայութեամբ Թիֆլիզում գտնուող բաժանորդների և հետաքրքրուողների։ «ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎԱԿԸ» տանող բաժանորդը, եթէ կամենայ կարող է այն թողնել խմբագրութեանս և ստանալ 100 ռուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքեաթներ; Ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։ V) Այլև այլք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, փրեօբէլեան, շախմատի և այլ խաղեր։ Բեբուսներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։ VII) Երգեր՝ ճայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խառն լուրեր։ XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ռ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 3 հատ 7 կ. մարկաներ։

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻՑ ԶԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

I-371

№ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

«Աղբիւրի» գրականական տարեգիրք ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ
Տարեմուտի երեկոյին . . . . . Դ. Աղայեանց։
Քիչ է, քիչ է (հէքիաթ) . . . . . « «
Մտերիմներ (պատկեր)
Կաղնիին տակի խոզը (Կռիլովից) . . . . . Գ. Արքեպ. Այվազեան։
Մարտին Լուտեր (Թարգմ.) . . . . . Փ. Վարդանեան։
Աշխատաւորին (Բիւրգերից) . . . . . Բ. Թադէոսեանց։
Կոյրերի և խուլ ու համրերի կարեկիցները . . . Ամբրոս։
Նոր տարի (բանաստեղծութիւն) . . . . . Յ. Յովհաննիսեան։
Մենաքէմ Դամաղացու պատմութիւնը (Վ. Կոլէնկոյից) . . . . . Յ. Յովհաննիսեան։
Կովկասեան տիպեր (պատկեր)
Հակապատկեր (Օմուլեվսկուց) . . . . . Աղ. Ծատուրեան

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան զրոյցներ։ Աչք և տեսողական պատրանքներ . . . . . Խաչիկ։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Մոզաիկա ԺԲ. . . . . Ն. Տէր-Աւետիքեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի օրիորդի հերոսական սիրագործութիւնը։ Հսկայական ստամոքս։ Պարսկաստանի կարգերը։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Հաւկիթի գործարան։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Խնդիր։ Հետաքրքիր թիւ։ Շախմատ։ Հանելուկներ։ Խաղ։ Շուտասելուկ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Վեցերորդ շրջան

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Յ. Յովհաննիսեանին . . . . . Հ. Դ. Մ. Ալիշան։
Նոր բանաստեղծ . . . . . Ս Մանդինեան։

ԽԱՌՆ ԼՈՐԵՐ

Շնորհակալութիւն։ Մարկաներ։ «Աղբիւրի» բաժանորդագրութիւնը։ «Աղթամարայ Ծովակ»։ «Երաժշտական Հայաստան»։ Այրի տ. Արարատեան։ Նոր Հանդէսներ։ «Աղբիւրի» սրբիմիաները։ այր Աթոռի վերնշինութիւնը։ Խմբագրութեանս ստացած նոտաներ եւ գրքեր։ «Արարատ»։ «Աղբիւրի» նուիրողներ։ «Արաքս»։ «Արութիւն եւ Մանուէլ»։ Յովհ. Յովհաննիսեան։ Գաբ. արքեպիսկոպոս։ Մ. Հ. Ուս. հրատարակութիւնները։ «Աղբիւրի» Պատասխանները։ Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՁԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է.

«Աղբիւրի» անցեալ 87 և 84 թ. ամբողջ №№-ից դեռ մնում են խմբագրութեանս մէջ և ծախվում են դպրոցական և ընտանեկան գրադարանների համար։ Բացի այդ խմբագրութեանս մէջ վաճառվում են երեխաների ընթերցանութեան համար պատկերազարդ գրքեր։

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ «ՄՇԱԿԻ» *տարեկան գինը* 10 *ռ. է, վեց ամսուանը* 6 *ռ.։*

Գրուել «ՄՇԱԿԻՆ» *կարելի է* ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաքօնսկայա և Բազարնայա վոզոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» *գրուելու համար սկսած է դիմել հետևեալ հասցէով.* ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». *Իսկ արտասահմանից.* Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբ.-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀԱՅԱԲԱԹԵԹՔ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՄԻԵՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ, ԵՒ ՄԻԵՒՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

Տարեկան գինն 5 *ռ. կէս տարուանը* 3 *ռ.*

Օտարազգացիք դիմում են՝ Тифлисъ Редакція „Арцагавкъ". *Արտասահմանից՝* Tiflis Rèdaction, de journal „ARDZAGANC".

Խմբ.-հրատ. Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՐԱՐԱՏ

Կրօնական, պատմական, լուսաւորական ամսագիր.

Ներկայ 1888 *թուականին բովանդակութեան եւ դիրքի կողմանէ «Արարատը» ենթարկուելու է փոփոխութեան։* Տարեկան գինը *Ռուսաստանում* 4 *ռ.։*

Հասցէն՝ Св. Эчміадзинъ, Ред. „Араратъ".

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ", на 1888 годъ.

Успѣхъ „Тифлисскаго Листка" въ первый годъ изданія его нами побудилъ насъ значительно увеличить форматъ газеты.

Несмотря на увеличеніе формата газеты до размѣровъ настоящаго номера, сопряженное съ большими расходами, цѣну на газету оставляемъ прежнюю.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

Съ доставкой въ Тифлисѣ: На годъ 3 р. *Съ пересылкой для иногородних*ъ на годъ 5 р.

Подписка и Объявленія принимаются исключительно въ конторѣ редакціи „Тифлисскаго Листка", на Барятинской улицѣ, д. Ротинова.

L'AMI DES ENFANTS ILLUSTRÉ OU L'ÉDUCATION

A l'Ecole et dans la Famille.
Directeur: l'Abbé Roussel.

Neuvième année; abonnements un an: 10 fr. Etranger, 12 fr. Un numèro, 30 centimes. Administration, 40, rue La Fontaine, Paris-Auteuil dépot: 15, rue Fékou (près saint-Sulpice) Paris.

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ. տարեկան գինը 4 *ռ.։ Հրատարակվում է Պետերբուրգում. տարբերելու կարելի է «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը։*

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍԻ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարէնը լոյս է տեսնում 12 համար, 3—4 տպագրական թերթից իւրաքանչիւր համարը։

Ներկայ 1888 թ. դիտաւորութիւն կայ խիստ ընդարձակել «ԱՂԲԻՒՐԻ» բ. բաժինը, իսկ ա. բաժինը պիտի աշխատենք, պահպանելով ամսագրի բուն նպատակն ու ուղղութիւնը, դարձնել մի պատկերազարդ հանդէս փոխարինող շքեղ հրատարակութիւն։

«ԱՂԲԻՒՐԻ» 1888 թ. I. պրէմիան՝ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ էֆիկտնի օլէօգրաֆիա, արդէն թէ թիֆլիզում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան՝ի ցոյց բաժանորդներին։ Այս պատկերը կարող է ամենաշքեղ հիւրասենեակները զարդարող պատկերներից մէկը լինել։ 1888 «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդ գրուողը հէնց խսկոյն կըստանայ այդ պրէմիան բաժանորդ գրուելուն պէս։

II. Պրէմիան՝ մի ԳԵՂԵՑԻԿ ԳԻՐՔ։ Սա կուղարկուի բաժանորդներին Զատկուայ №-ի հետ։

«ԱՂԲԻՒՐԻ» 1888 թ. III. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի յայտնի «ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎԱԿԸ» վիճակ կըդցուի «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին, ներկայութեամբ Թիֆլիզում գտնուող բաժանորդների և հետաքրքրուողների։ «ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎԱԿԸ» տանող բաժանորդը, եթէ կամենայ կարող է այն թողնել խմբագրութեանս և ստանալ 100 ռուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքեաթներ; Ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Հետաքրքիր տեղեկութիւններ։ V) Այլև այլք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, փրեօբէլեան, շախմատի և այլ խաղեր։ Բեբուսներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։ VII) Երգեր՝ ճայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խառն լուրեր։ XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ռ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 3 հատ 7 կ. մարկաներ։

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻՑ ԶԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԳԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

ԳԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԲԱՆԲԵԼՈՒԹԻՒՆ

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՈՄ

ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Декабря 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

Տարեմուտի երեկոյին
Պայրս թխեց կարկանդակ,
Մէջը դրաւ հոնի կորիզ,
Իբրև բախտի նշանակ։

Կորիզն, ասաց, ո՞ւմ որ ընկնի,
Դովլաթաւոր կըդառնայ,
Ո՛ւր որ գնայ, ի՞նչ գործ բռնէ,
Փառք ու պատիւ կստանայ։

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկաւ ինձ բաժին,
Եղբայրներս սրտնեղելով՝
Նախանձեցան իմ բախտին։

«Պայր է Բախտը» ասուտ չէ ասած,
Աւծ եղբայրս փնթփնթաց,
«Արիթէ դա է ամենից մէջ
Աշխատաւոր, բանիմաց»...

Մէկէնները էլ հաւանեցան
Մեծ եղբօրը ասածին,
«Իրաւ, իրաւ, չէր արժանի»,
Միաբերան ձայնեցին . . .
Մայրը ասաց. «Խելօք կացէք,
Ահա կըգայ Նոր Տարին,
Նա որ տեսնէ ձեզ կռուելիս,
Պարգև չի տալ ոչ մէկին։
Բայց որ տեսնէ՝ դուք սիրով էք
Եւ խռով չէք իրարից,
Այնուհետև ինչ որ ուզէք,
Չի խնայիլ ձեզանից» . . .
Այս ասելով նա մեզ տուաւ
Տեսակ-տեսակ մրգեղէն,
Չիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եւ զանազան քաղցրեղէն,
Քաղցրը կերանք ու քաղցրացանք,
Եւ խնդացինք շատ ու շատ,
Զարազ արինք նուռ, սերկևիլ,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ...
Հոնի կորիզն այնուհետև
Բոլորովին մոռացանք,
Եւ շատ սիրով՝ իրար գրկած,
Պառկոտեցանք, քնեցանք . . .

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՔԻԶ Է՞Լ, ՔԻԶ Է՞Լ

(ՀԷՔԻԱԹ)



Մէկ աղքատ մարդ մի որդի ունէր միանուռճար՝ Քաջիկ անունով։ Քաջիկը շատ սրամիտ էր և շատ խելօք, միայն շատ դիւրագրգիռ էր և շուտ բարկացող։ Նա չէր վերցնում ոչ մի դառը խօսք, ոչ մի կոպիտ վարմունք, և այս պատճառով էլ՝ ոչ մի վարպետի մօտ երկար չէր մնում մի արհեստ սովորելու համար։ Հայրը մի վարպետից միւսի մօտ էր տանում, մի արհեստից հանում, միւս արհեստի էր տալիս, բայց որովհետև բոլոր արհեստաւորներն էլ միատեսակ կոպիտ վարուե-

ցողութիւն ունէին, այդ պատճառով էլ Քաջիկը ոչ մէկի մօտ երկար չէր մնում։

Մէկ օր էլ Հայրն ասաց.—Ես ո՞ւրտեղ գտնեմ քեզ համար այնպիսի վարպետ, որ քո բնութեանդ յարմար լինի։ Մեր աշխարհի օրէնքն այնպէս է, որ վարպետը պէտք է աշակերտին խրատէ, յանդիմանէ, ծեծէ, որ նա մարդ դառնայ։

—Այդ շատ լաւ ես ասում, Հայր, պատասխանեց Քաջիկը, բայց ի՞նչ անեմ, ես չեմ կարողանում վերցնել։ Երբ որ ինձ հետ մարդավարի չեն վարվում, գլուխս շըշմում է, աչքերս մթնում, էլ ոչինչ չեմ տեսնում, ոչինչ չեմ լսում։ Իմ կոպիտ վարպետներս կարծում են, թէ ես դիտութեամբ եմ կուրանում ու խլանում և աւելի են բարկանում ու աւելի ծեծում»—Այս ասաց Քաջիկը և սկսեց լաց լինել։

Հայրը խելօք մարդ էր. գիտէր որ Քաջիկի տասնն ուղիղ է, բայց ինչ անէր խեղճը, կոպիտ վարպետներին բարեկրթել չէր կարող, մնացել էր տարակուսած և չըգիտէր ուր տանէր իւր որդին։ Վերջը մտածեց որ տանէ, մի ուրիշ քաղաք, գուցէ կարողանայ իւր որդու բնութեանը յարմար մի վարպետ գտնել։ Այսպէս մտածելուց յետոյ՝ Հայր ու որդի վճռեցին, պատրաստութիւն տեսան և ճանապարհ ընկան դէպի մի ուրիշ քաղաք։ Ճատ դընացին թէ քիչ, Նստուած գիտէ, մինչև հասան մի աղբիւրի. նստեցան աղբիւրի մօտ, որ ճաշեն, հանգստանան և յետոյ շարունակեն իրանց ճանապարհը։ Մի փոքր որ հանգստացան, Հայրը բերանքսիվայր ընկաւ աղբիւրի վրայ, մի կուշտ խմեց և ասաց—Ուիսկի՜... Այս խօսքի վրայ յանկարծ մի մարդ դուրս եկաւ աղբիւրից՝ երկար հասակով ու մօրուքով և ասաց—

—Ե՛ս եմ Ուիսկին. ի՞նչ էք ուզում ինձանից։

Այս որ տեսան, Հայր ու որդի մնացին իրար երեսի

մտիկ տալիս, զարմացան, ապշեցան և չիմացան ինչ պատասխան տան։ Վերջը հայրն ասաց.

—Ուխա՛յ ապէր, մենք քեզ չըկանչեցինք և՝ ոչինչ չենք ուզում քեզանից։ Մենք ճանապարհորդ ենք. սա իմ որդին է. տանում եմ մի վարպետի տամ, որ մի արհեստ սովորի։

Ուխայն ասաց.—Ֆուը ինձ, ես դրան լաւ արհեստ կըսովորեցնեմ և լաւ կըպահեմ։ Ես գիտեմ դրա բնութիւնը, դա ամեն մարդու մօտ չի կենալ; ամեն արհեստ չի սովորիլ, բայց ինձ մօտ կըմնայ։

Հայրը չիմացաւ ինչ պատասխան տար խորհրդաւոր Ուխային, որովհետև կարծում էր, թէ գուցէ նա մարդ չէ, այլ սատանայ է կամ հրեշտակ, բայց Քաջիկն ասաց.—Հայր, ես կերթամ որա մօտ, երևում է, որ սա մի հնարագէտ մարդ պիտի լինի. ես որա արհեստը կըսովորեմ։ Հայրն ասաց.—Թող քո կամքը լինի։ Եւ որդին տուաւ Ուխայ ապօրը։ Ուխայ ապէրը մի քսակ ոսկի տուաւ Հօրը և ասաց.—Մի տարուց յետոյ կըդաս էլի այս աղբիւրի մօտ, կըխմես և կասես՝ ուխա՛յ, ես էլի դուրս կըգամ և քո որդին քեզ կըյանձնեմ։ Այս ասելուց յետոյ Քաջիկի ձեռքից բռնեց և անյայտացաւ աղբիւրի մէջ...

2.

Ուխայը մի հարպիկ ձեռնածու էր, այսինքն՝ աչքակապ, ֆոկուսնիկ, և մի և նոյն ժամանակ մի չըլսուած և չըտեսնուած կախարդ։ Նրա բնակարանը մի առանձնացած տեղ էր. երկրի երեսին էր արդեօք, թէ գետնի տակին՝ յայտնի չէ. և այնքան հրաշալի մի շէնք էր, որ լեզուով պատմել չի լինիլ։ Բոլոր պատերը, սիւները, յատակը, առաստաղը, վերնածածկը, գաւիթը, պարիսպը, մի խօսքով ամբողջ շինութիւնը իւր բոլոր մասներով շինուած էր արծաթից, ոսկուց, ադամանդից, եաղութից, զումրուխտից, և ամեն գոյնի գոհարներից ու ան-

գին քարերից, և շինուած էր այնպիսի վարպետութեամբ և ճաշակով, որ արեգակի ճառագայթները վրան ընկնելով՝ ամբողջ տունը ամեն մի բոպէից յետոյ մի նոր ձև, մի նոր պատկեր էր ստանում, որ մարդ նայելից չըձանձրանայ, չըկշտանայ։

Նա ունէր և ընդարձակ այգի, ամեն տեսակ ծառ ու ծաղկով զարդարուած, միշտ փթթած, միշտ դալար՝ թէ ամառ և թէ ձմեռ, բայց ոչ մի խոտ, ոչ մի թուփ, ոչ մի ծառ կամ ծաղիկ բուսեղէն չէր, իսկական, բնական բոյս չէր, այլ ով գիտէ ինչից էին շինուած և ինչպէս։ Աւազաններ կային տեղ-տեղ, հրաշալի աւազաններ, մարջանից շինած խողովակներով և մարմարէոնից շինած հիւրիների չքնաղ անդրիներով, որոնց դլխների վրայ դըրած ոսկէ սափորներից ականակիտ շադրուանները մինչև յիսուն կանգուն վեր էին խփում և ցնցողնած վայր թափվում ծիածանի բոլոր գոյներովը զարդարուած։ Բայց... Ջուր չէր այդ թափուածը, այլ ով գիտէ, գուցէ աղամանդի այսինքն բռլեանտի ու ալմաստի Հալուածք էր, կամ մի այլ զարմանալի հեղուկ։

Թռչուններ կային տեսակ-տեսակ, ամեն ցեղի և ամեն գոյնի, որոնք թևերը շարժելով՝ երգում էին հազար ձայնով, բայց... չէին թռչում, որովհետև նրանց թեւերը փետուրից չէին, նրանք իսկական թռչուններ չէին, բայց այնպէս էին շինուած, որ մի մեղմ հով փչելիս՝ նրանց մէջ սարքած մեքենան շարժել էր տալիս նրանց թևերը և նրանց կտուցից դուրս էր գալիս մի զմայլելի երգ, և թէպէտ ամեն մէկը մի ջոկ ձայնով ու եղանակով էր երգում, բայց բոլորի ձայնը մէկ տեղ խառնուելով մի զարմանալի ներդաշնակութիւն էր յառաջ գալիս, դառնում էր մի սքանչելի մեղեդի, որ մարդ լսելուց չէր կըշտանում։ Այդ մեղեդին իւր եղանակը փոխում էր փչած քամու կամ հովի փոխուելու հետ...

Այսպէս Ուխայը ամեն ինչ ունէր, բայց բոլորն էլ հարտարութեան դորձ էր և ոչ բնութեան: Մի կին ունէր միայն, որ ճշմարիտ, իսկական կին էր, շատ գեղեցիկ և խելօք, և հմուտ իւր մարդու բոլոր գիտութեանը և արուեստին: Նրանք չունէին ոչ խոհանոց, ոչ խոհարար և ոչ ծառայ: Ճաշելու ժամանակ սեղան էին նըստում և ինչ որ ուզում էին, իսկոյն դրվում էր սեղանի վրայ ոսկեղէն ամաններով: Քաջիկը ոչ տեսած և ոչ լսած էր, այնպիսի համադամ կերակուրներ կային: Եթէ նրա սիրտը երբեմն իւր թանապուրն էր ուզում կամ մախոխը, իսկոյն դրվում էր նրա առաջին: Երբ որ ծարաւում էին, վերցնում էին դատարկ բաժակը և նա իսկոյն լցնվում էր պարզ ու զովարար ջրով: Հագնել էին ուզում, իսկոյն պատրաստ էր լինում հագուստը ինչ ձևի և ինչ կտորից որ ուզենային: Եւ այսպէս ամեն ցանկութիւն, ամեն փափագ կատարվում էր իսկոյն և եթ: Քաջիկին սկզբումը շատ տարօրինակ էր թվում այս ամենը, բայց հետզհետէ ընտելացաւ և հաշտուեցաւ այս զարմանալի վիճակի հետ:

Այսպէս մի քանի օր որ անցաւ, Ուխայն ասաց Քաջիկին:

—Տես ահա մենք որդի չունինք, եթէ դու լաւ սովորես իմ արհեստը, ես քեզ կը որդեգրեմ, դու կըդառնաս իմ որդին և կըպահպանես ինձ և իմ կնոջը մեր ծերութեան ժամանակ:

Այս յուսով Ուխայն սկսեց սովորեցնել Քաջիկին իւր կախարդութեան արհեստը: Նա սովորեցնում էր կերպարանափոխուելու հնարքը, թէ ինչպէս պէտք է մարդ իւր ուզած բանը դառնայ, օրինակ՝ ձի, թռչուն, քար, ծառ, և ուրիշ բան, ինչ որ ուզենայ:

Ամեն մի ջոկ բան դառնալու համար մի ջոկ ասելիք կար, այն ասելիքը որ սովորէր և ասէր, իսկոյն կըդառնար իւր ուզած բանը:

Քաջիկն սկսեց սովորել և վարժութեան համար ինչ ասես՝ դառնում էր — ձի էր դառնում և չափ ընկնում դէս ու դէն. մուկն էր դառնում, ծակ ու ծուկ մըտնում. կատու էր դառնում, մլաւում. շուն էր դառնում, հաչում. թռչուն էր դառնում, թռչում. ծառ էր դառնում, ճղները տարածում դէս ու դէն. քար էր դառնում, մի տեղ ցցվում կամ վայր ընկնում. դէրվիշ էր դառնում, և չանաղը ձեռքն առած երգում, վայ ուզում. աշըղ էր դառնում, սաղ ածում և խաղ ասում կամ մի նոր մարտաքա սարքում...

Ուխայի կինն աւելի շատ բան էր սովորեցնում Քաջիկին և շատ սիրում էր նրան: Նա սկսեց այնպիսի բաներ էլ սովորեցնել, որ մարդուն հաճելի չէր: Թէպէտ այդ բաները նա ծածուկ էր սովորեցնում, բայց սատանայ և խորամանկ Ուխայից ինչ կըծածկուէր: Ուխայն ամեն դաղտնիք չէր ուզում յայտնել Քաջիկին, այդ բանը դեռ վաղ էր համարում. չէր ուզում իւր հացը բոլորովին կտրել և տալ ուրիշին: Երբ որ գլխի ընկաւ, որ Քաջիկն աւելի է յառաջ գնացել, քան թէ պէտք էր, սկսեց խէթ աչքով նայել նրա վրայ և վերջը բանը մինչև այնտեղը հասաւ, որ ուզեց սպանել նրան:

Բայց կինն էլ պակաս խորամանկ չէր: Նա էլ երբ որ իմացաւ մարդու միտքը, ուզեց ազատել Քաջիկին, և ասաց նրան, որ խելագար ձևանայ և այնպէս ցոյց տայ, որ իբր թէ էլ ոչինչ չի կարողանում սովորել, և ինչ որ սովորել է, բոլորն էլ մոռացել է:

Քաջիկը ձևացրեց իրան իբրև խելագար՝ իւր սովորած արուեստի բոլոր ճարտարութեամբը, դեղնեց, սիրբրթնեց, և սկսեց խենթ ու խելառ, ինչ ասես, դուրս տալ գլխից և այնպիսի վտանգաւոր բաներ անել, որ միայն խելագարը և գլխից ձեռք վերցրած մարդը կանէր:

—Խե՜ղճ տղայ, ասաց մէկ օր էլ կինը մարդուն— շատ բան սովրելուց գժուեցաւ...

Խորամանկ Ուխայը հեշտ և շուտ խաբուող չէր։ Նա ամեն հնար դործ դրաւ, որ իմանայ, թէ արդեօք Քաջիկն ստոյդ խելագար է, թէ ձևանում է միայն, բայց ի վերջոյ բոլորովին համոզուեցաւ, որ Քաջիկի խելագարութեան մէջ ոչինչ կեղծիք չկայ...

Հէնց այդ ժամանակները Քաջիկի հայրը եկաւ աղբիւրից խմեց, ուխա՛յ ասաց. Ուխայն իմացաւ իսկոյն և Քաջիկին տարաւ տուաւ հօրը և ասաց.—Որդիդ հիւանդացաւ, և ինչ որ սովորել էր, մոռացաւ։ Տար տուն, երբ որ լաւանայ, էլի բեր ինձ մօտ։ Այս ասելուց յետոյ նրան մի քսակ ոսկի տուաւ և ինքն անյայտացաւ։

3

Ուխայը չասաց, թէ քո որդին խելագարուել է, և լաւ էր, որ չասաց. եթէ ասէր, շատ վատ կըլինէր Քաջիկի համար. նա այնուհետև ինչ խելօք բան էլ որ անէր, հօրը խենթութիւն պիտի թուար։ Ճանապարհին հայրն սկսեց յանդիմանել որդուն և ասել, որ նա կարողանալու չէ մարդ դառնալ։

—Մարդ որ չըդառնամ, պատասխանեց որդին, մի՞թէ մի ուրիշ կենդանի էլ չեմ կարող դառնալ, օրինակ՝ ձի, էշ, ուղտ...

—Ի՞նչ ասել կուզի որ կարող ես. ի՞նչ կայ աւելի հեշտ, քան թէ էշ դառնալը, դժուարը մարդ դառնալն է...

—Այդպէս չէ, հայր. մարդ դառնալու համար ոչինչ դժուարութիւն չըկայ. մենք մարդ ենք ու մարդ, էլ ինչ հարկ կայ մարդ դառնալ. բայց ուրիշ բան է, եթէ մարդը կարողանայ էշ դառնալ, ձի դառնալ, քար դառնալ, ծառ դառնալ...

—Այդպէս չէ, որդի. ով որ օրինաւոր մարդ չէ, նա մի որ և իցէ կենդանու է նման. հապա չե՞ս լսել, որ ասում ենք՝ այս ինչ մարդը յիմար էշ է, փլանը կոպիտ

արջ է, փստանը անզգայ խոզ է, այս ինչը խաբեբայ աղուէս է, այն ինչը գիժ գոմէշ է, մարկոսը մի խորամանկ օձ է, կիրակոսը վախկոտ նապաստակ է, մաթոսը մի կատաղած շուն է...

—Ո՛չ, հայրիկ, ես ուրիշ բան եմ ասում, դու ուրիշ։ Ախը ես ուսում եմ առել, շատ բան եմ սովորել, դու իմ ասածը, իմ լեզուն չես կարող հասկանալ։

—Ինչո՞ւ չեմ հասկանալ, որդի, եթէ մարդավարի խօսես։ Ես ասում եմ՝ մարդ դառնալն է դժուար, դու ասում ես՝ էշ դառնալն է դժուար. այստեղ ի՞նչ կայ չը-հասկանալու. այդ ի՞նչ ուսում է...

—Այս այն ուսումն է, որ ես կարող եմ ուղտ դառնալ, բայց դու չես կարող...

—Աստուած մի արասցէ. ես չեմ էլ ուզիլ ուղտ դառնալ։ Ինչո՞ւ մարդ դառնալը թողած՝ ուղտ դառնալը սովորեցիր, մի՞թէ մեզանում քիչ ուղտեր կան... Ով որ լսի, մեզ ի՞նչ կասի. չի՞ ասիլ՝ փլանը իւր տղին տարել է տուել ուսումի, որ մարդ դառնայ, բայց նա ուղտ է դառել...

Այսպէս հայր ու որդի վիճելով շարունակեցին իրանց ճանապարհը, մինչև հասան մի մացառուտ տեղ։ Այնտեղ քաջիկը յետ ընկաւ և մի թուփի քամակ անցնելով՝ դառաւ մի եղնիկ, և վազելով գնաց հօր առաջը։ Հայրն ուզեց բռնել, չը կարողացաւ։ Եղնիկը չէր փախչում, այլ մինչև անգամ բռնել էր տալիս, և մէկ էլ յանկարծ դուրս պրծնում։ Հայրը կանչեց քաջիկին, որ հասնի օգնէ, բայց քաջիկը չերևաց, մինչև եղնիկը փախաւ ընկաւ մացառուտը, նոր այնտեղից դուրս եկաւ քաջիկը։ Հայրը բարկացաւ որդու վրայ, թէ ինչո՞ւ շուտ չեկաւ և սիրուն եղնիկը ձեռքից փախցնել տուաւ։ Քաջիկը ծիծաղեց միայն և ոչինչ չասաց. մի քիչ որ առաջ գնացին, նա էլի յետ մընաց, դառաւ մի ձիու քուռակ և գնաց հօր առաջին կանգնեց։ Հայրն ուզեց բռնել, բայց քուռակը բռնել չէր

տալիս։ Կանչեց որդուն, որդին չերևաց, մինչև քուռակը փախաւ անյայտացաւ, նոր երևաց որդին, բայց ուշ էր։ Հայրը դարձեալ յանդիմանեց որդուն, թէ ինչու ուշացաւ, և սկսեց պատմել, թէ ինչքան գեղեցիկ էր քուռակը, կասէիր մի քաշած պատկեր էր, և անպատճառ մի հրեղէն կամ ծովաձիու քուռակ էր։

Այսպէս՝ մինչև տուն հասնելը որդին շատ չարչարեց հօրը՝ զանազան բաներ դառնալով։ Հէնց որ հայրը յոգնում էր և ուզում էր նստել, քաջիկը մի առիթ էր գտնում, ծածկվում և ծածուկ մի բան դառնալով՝ հօր առաջն ընկնում վազում. հայրն ընկնում էր ետևիցը և բաւական տեղ վազում էր. և մինչև տուն համարեա վազելով գնաց խեղճը։

Երբ որ տուն հասան, միւս օրը որդին պատմեց հօրը, որ ճանապարհին պատահած բոլոր բաներն ինքն էր։ Յետոյ ասաց.—Ես հիմա մի լաւ ձի կըդառնամ, դու ինձ տար ծախիր, միայն իմ սանձը չըծախես։ Այս ասելուց յետոյ՝ մտաւ գոմը և այնտեղ դառաւ մի կարմիր ձի և այնքան գեղեցիկ, որ տեսնողը կասէր՝ ոչ ուտեմ, ոչ խմեմ, միայն սրա շէնք ու շնորհքին մտիկ տամ։ Հայրը տարաւ բազար և բոլոր տեսնողները մնացին հիացած։ Հազար մանէթ գին դրաւ և մէկը՝ առանց խօսելու՝ հանեց տուաւ փողը և ձին առաւ տարաւ։ Հայրը սանձը չըտուաւ և փողի հետ տարաւ տուն։ Առնողը տարաւ ձին և սկսեց խաղացնել, բայց չըկարողացաւ սանձահարել և հրաշալի կենդանին հրեղէն ձիու նման թև առած՝ թռաւ անյայտացաւ։ Մի ժամից յետոյ նա իրանց տանն էր և առաջուան քաջիկն էր։ Այսպէս մեր քաջիկը մի քանի անգամ ձի դառնալով և ամեն անգամ ուրիշ գոյնով, և աւելի թանդ գնով ծախուեցաւ։

Մէկ օր էլ, երբ որ հայրը նրան բազար էր դուրս բերել, մի քօսակ մարդ մօտեցաւ, ձեռքը քսեց ձիու բաշին,

աչքերին, շատ հաւանեց, գովեց և հարցրեց գինը։ Հայրն ասաց, որ գինը տասը հազար մանէթ է, առանց սանձի։

—Իսկ սանձն ինչ արժէ, հարցրեց քօսակը։

—Սանձը ծախու չէ, պատասխանեց Հայրը։

—Սուտ ես ասում, կրծախես, ժպտալով ասաց քօսակը. երևի ուզում ես մի բան էլ սանձի համար դՀլես։ Ես առանց սանձի չեմ առնիլ, որովհետև այս սանձն ինձ աւելի է դուր գալիս քան թէ ձին, և այս պատճառով ես մի հազար մանէթ էլ սանձի համար կաւելացնեմ...

—Չեմ կարող տալ, թէկուզ երկու հազար մանէթ տաս . . .

—Ի՞նչ անխելք մարդ ես... դէ լաւ, տասը հազար էլ սանձի համար կըտամ։

Այս որ ասաց քօսակը, բոլորի բերանը բաց մնաց, թէ գիժ խօմ չէ այս մարդը, որ վեց շահանոց սանձին տասը հազար մանէթ է տալիս։—Գիժն աւելի չըտուողն է, ասացին շատերը և սկսեցին մեղադրել ձիավաճառին, թէ ինչո՞ւ այդպիսի մի առասպելական գնով չի ծախում սանձը։ Ինքը Հայրը մնաց զարմացած այդ գնից և շշկլուելով՝ սանձն էլ հետը ծախեց։ Քօսակը քսան հազար մանէթը համբրեց տուաւ Հօրը և ձիու սանձն առաւ ձեռքը։

Երբ որ քօսակը ձիու սանձը ձեռքն առաւ, ամենքն էլ նկատեցին, որ ձիու աչքերից արտասուքի խոշոր կաթիլներ թափուեցին։ Հայրն էլ տեսաւ և զղջաց. ուզեց յետ առնել ձին, բայց քօսակը ժամանակ չըտուաւ. նա հեծաւ ձին և մի ակնթարթի մէջ անյայտացաւ։

Այս քօսակը Ուխայն էր, և ճանաչել էր Քաջիկին։

4.

Ուխայը ձին տարաւ իւր դռանը կապեց, ինքը մտաւ տուն, առաւ մեծ դանակը և սկսեց սրել, որ նրանով Քաջիկին մորթէ։ Կինը նայեց պատուհանից և ճանաչեց Քա-

ջիկին։ Մինչև մարդը դանակը կրսրէր, կինը թաքուն վայր իջաւ և սանձը վէր առաւ ձիու դլխից։ Քաջիկն խոկոյն մի աղաւնի դառաւ և թռաւ դէպի տուն։ Ուխայը դուրս եկաւ և տեսաւ որ ձին չկայ, աչքովն ընկաւ աղաւնին և խոկոյն ինքն էլ մի բազէ դառաւ և ընկաւ աղաւնու ետևից։ Աղաւնին տեսաւ, որ բազէն ետևից է ընկել, խոկոյն իմացաւ որ Ուխայն է. իւր ուժը կրկնապատկեց, որ նրա ճանկը չընկնի։ Այսպէս աղաւնին փախաւ, բազէն էլ նրա ետևից, մինչև Հասան մի գիւղ և հէնց այն էր՝ քիչ էր մնում, որ բազէն բռնէր աղաւնուն և քրքրէր, աղաւնին խոկոյն մի կարմիր խնձոր դառաւ և վայր ընկաւ մի տան հերթից։ Այդ տանը Հարսանիք կար։ Նորափեսան իւր մակառներով սեղան էին նստած և ուրախութիւն էին անում։ Նորափեսի առաջին, ինչպէս սովորութիւն է, շատ մրգեղէն կար, որ բերել էին բարեկամները իբրև թագաւորի մ ա դ ա։ Հերթից վայր ընկած կարմիր խնձորն էլ դրին թագաւորի առաջին, կարծելով թէ բարեկամներից մէկը կլինի վայր ձգած զուարճութեան համար։ Բայց շուտով ամենքի ուշադրութիւնը դարձաւ այդ խնձորի վրայ, ամենքը նկատեցին որ այդ խնձորը հասարակ խնձոր չէ։ Ամենքն էլ ձեռքներն առան խնձորը հոտոտեցին, հիացան և գովեցին, ամեն մէկը մի բան ասաց, և վերջումը մէկն էլ ասաց, որ այս խնձորը հասարակ խնձոր չէ. սրան մարդ չի վայր գցել հերթիցը և ինչ հարկ կար. սա անպատճառ երկրնքից է վայր ընկել և այն խնձորներից է, որ հեքիաթների մէջ հարսանիքի վերջին երկնքից վայր է ընկնում։—

Բազէ դառած Ուխայը Քաջիկի խնձոր դառնալը որ տեսաւ, և իմացաւ, որ նոյն տանը հարսանիք կայ, ինքն էլ մի աշըղ դառաւ և սազը ձեռքին մտաւ հարսնքատուն։ Աշըղին պատուով ընդունեցին և նստեցրին փեսայի դէմուդէմը։ Աշըղը լարեց սազը և սկսեց այնպիսի

երգեր երգել և այնպիսի եղանակներ ածել, որ բոլորովին մոռացնել տուաւ խնձորի ներկայութիւնը, միայն ինքը աչքը խնձորից չէր հեռացնում։ Վերջը երբ որ ուզում էին նրան մի լաւ պարգև տալ, այսինքն նորահարսի դորձած մի ջուխտ նախշուն գուլբա և մի ջուխտ կարմիր տրխատան, աշըղը վեր չառաւ, և խաղով հասկացրեց, որ իւր ուզածը միայն կարմիր խնձորն է...

Նորափեսան չուզեց աշըղի խաթրը կոտրել, վեր առաւ խնձորը որ տայ իրան, բայց խնձորը վայր ընկաւ ձեռքից և մի բուռը կորեկ դառնալով՝ փռուեց յատակի վրայ։ Ամենքը յետ յետ քաշուեցան, որ տեսնեն այդ ինչ հրաշք էր, արդեօք խնձորն էր, որ կորեկ դառաւ, թէ՞ խնձորը մի աման էր կորկով լիքը, այդ միջոցին յանկարծ մի հաւ լուս ընկաւ և սկսեց կտկտալով հաւաքել կորեկը։ Հէնց որ բոլորն արդէն վերջացնելու վրայ էր, կորկի մէկն ասեղ դառաւ և թռաւ ցրցուեց նորահարսի կրծկալի մէջ. հաւն էլ իսկոյն մի բարակ թել դառաւ և թռաւ անցաւ ասղի ծակը և ուզեց ասեղը իւր հետ թռցնել, բայց ասեղը յաղթեց թելին և թռաւ ընկաւ կրակի շեղջի մէջ։ Թելը կրակումն այրուեց իսկոյն, իսկ ասեղը դուրս թռաւ և դարձաւ մեր քաջիկը և զարմացրեց հանդիսականներին։

Թէպէտ քաջիկն էլի քաջիկ դառաւ և ազատուեց Ուխայից, որ արդէն մոխիր էր դարձել, բայց ինքն էլ այրուեցաւ բաւականին և ոչ միայն իւր առաջուան գեղեցկութիւնն ու թարմութիւնը կորցրեց, այլ և իւր ձեռք բերած շնորհքը, իւր սովորած արհեստը։ Էլ չկարողացաւ մի ուրիշ բան դառնալ. նրա բոլոր ասելիքները, բոլոր աղօթքներն ու թալիսմանները կորցրին իրանց զօրութիւնը Ուխայի այրուելու հետ...

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

(Վերջը մուս անգամ)

ՄՏԵՐԻՄՆԵՐ

ԿԱՂՆԻՒՆ ՏԱԿԻ ԽՈՉԸ

(Կռիլովից)

Ատ հինաւուրց ու վարսագեղ հաստ կաղնիի մը տակ
Այնքան կաղին ճրթկեցաւ անգահ խոզերուն մէկը,
Որ վերջապէս կրշտացաւ ու տրկռեցաւ,
Յետոյ ընկաւ տրքտրքալով պառկեցաւ.
Աղէկ քուն մը քաշելէն ետքը զարթեցաւ,
Աչքը վերուց, անգամ մը վեր նայեցաւ,
Եւ ըսկրսաւ կաղնիին տակը փորել քիթովը։
«Ատ ինչ է ատ ըրածդ, կանչեց վերէն ագռաւը.
Արմատներն որ դուրս հանես՝ ծառն ալ հարկաւ կըչորնայ»։
—Թող չորնայ,
Պատասխանեց խոզն ագռաւին.
Իմ հոգըս չէ ամենևին.
Ես այդ ծառին մէկ օգուտ մը չեմ տեսներ.
Ինծի համար եղեր է ու չէ եղեր.
Ինծի կաղին կա՛յ մի՝ կաղին. ան նայէ.
Իս գիրցընող ատ փայտը չէ, կաղինն է»։
Զրդիմացաւ այն խօսքերուն մեր կաղնին,
Դարձաւ այսպէս ըսաւ խոզին.
«Ա՜յ ապերախտ խոզ, պակսի քո շունչդդ.
Թէ վերցընէիր մէյմը վեր դունչդդ,
Ելլելիք աչքերդդ կըտեսնէին
Որ կաղիններն ի՛մ վրրաս կըբուսնին։

ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ

1.

այ մի երկիր, ուր ժողովուրդը գերմանե-րէն է խօսում: Այդ երկիրը կոչվում է Գեր-մանիա և Հարուստ է. քաղց ու սով չէ պատահում այնտեղ, երկիրն ամեն տեսակ արմտիքով առատ է, գետերը մեծ են, նաւագնաց են. դրանց վրայով գնում-գա-լիս են շոգենաւեր. գիւղերի մէջ փողոցները սալայատակ են. քարով ծածկուած: Անտառ ու լեռներ էլ կան այն-տեղ, որոնց միջից գերմանացիք հանում են քարածուխ և գանագան հանքեր: Հանքերից ստանում են երկաթ, պը-ղինձ, կապար և ուրիշ մետալներ: Շատ գործարաններ էլ ունին գերմանացիք. այս գործարաններում պատրաստում են ջիթ, կտաւ, չուխայ. շինում են գանակ, մկրատ, ման-դաղ, կացին, ժամացոյց և տեսակ-տեսակ մեքենաներ: Անկարօտ կեանք են վարում. ունին մեծ-մեծ ուժեղ ձիեր, կուշտ ոչխարներ և կովեր, որոնց վրայ նայելն անդամ զուարճութիւն է. այնպէս կովեր ունին, որ օրը մինչև ե-ռեք գոյլ կաթ են տալիս: Ամեն մի գիւղի մէջ կայ մի ե-կեղեցի, դեղանոց, հիւանդանոց, բժիշկ և վարժարան, վարժարանի մէջ սովորեցնում են մայրենի լեզու, կրօն, թուաբանութիւն, աղդային պատմութիւն, աշխարհագրու-թիւն, եկեղեցական երգեցողութիւն, գիւղական տնտեսու-թիւն և գանագան արհեստներ: Աշակերտներն ուսում առ-նելուց յետոյ գնում են հեռաւոր քաղաքներ, որ այնտեղ էլ ուրիշներից բան ուսանին:

Մեզնից չորս հարիւր տարի առաջ գերմանական երկրի մէջ բնակվում էր իւր կնոջ հետ Յովհաննէս Լութեր անունով մի հանքահան։ Դրանք չքաւոր մարդիկ էին և աշխատանքով էին ապրուստ ճարում։ Յովհաննէսն օրական հաց վաստակելու համար բանում էր հանքի մէջ, քար հանելով և տաշելով. իսկ կինն աշխատում էր տան մէջ։

Ստուած դրանց մի որդի բաշխեց. մկրտեցին և անունը դրին Մարտին։ Սա որ մեծացաւ, ձեռքն այբբենարան տուին, որ կարդալ սովորէ։ Հայրը մի խիստ մարդ էր, որդուն երես չէր տալիս և ամեն մի չնչին բանի համար ծեծում էր։ Մայրն էլ շատ փափուկներից չէր, որդուն լաւ սաստել գիտէր։

Մի օր Մարտինը շտեմարան էր մտել՝ կաղին գողանալու համար. մայրը վրայ հասաւ և մի լաւ քօթկեց նրան։

Դանը թուեցաւ որդուն հօր տան մէջ մնալը. գիտէր, որ փորձանքից ազատուելու չէր—այսօր կամ վաղը նորից պիտի ծեծ ուտէր։ Այս պատճառով վախ ընկաւ սիրտը և վճռեց փախչել տանից, և փախաւ։ Կարծում էր, թէ հայրն իրան չէր սիրում. բայց սխալ էր։ Հայրն ուրիշ հանգի էր սիրում նրան, այս կանոնին հետևելով, թէ «Ծեծիր որդուդ, քանի փոքր է, որ մեծանալուց յետոյ լաւ մարդ դառնայ. առանց ծեծի բան չի սովորիլ»։

Ժամանակ հասաւ, որ պէտք էր վարժարան տալ որդուն։ Վարժարան պահողներն այն ժամանակ վարդապետներ էին։ Բիրտ և կոշտ մարդիկ էին դրանք. ոչ ոքի դիջողութիւն չէին անում և ամենափոքր բանի համար դանով պատժում էին։ Մի թեթև յանցանք գործեցիր թէ չէ, իսկոյն—դա՛ն. դասդ չբսերտեցիր—դա՛ն. գիրդ սխալ գրեցիր—դա՛ն, փոքր ինչ չարութիւն արիր—դա՛ն, միշտ դա՛ն. խեղճ Մարտինին մի օր տասնհինգ անգամ թակե-

ցին։ Ժամանակն այնպէս էր։ «Ծեծը խելք է տալիս. ասում էին. դանը պատիժ չէ—խրատ է»։

Մարտին սուր տղայ էր. շուտ անցաւ Համբանքը, կարդալը, բերան սերտեց Հայրմերը, Հաւատամքը, տասն պատուիրանքը. այս բոլորը սովորելուց յետոյ՝ դնաց քաղաք և մտաւ մի ուրիշ վարժարան։

Հայրն ուրախ էր, որ որդին այդպէս լաւ էր սովորում, բայց և վշտանում էր տեսնելով, որ նրան օգնելու հնար չունէր։ Հօր միջոցները շատ սակաւ էին. ընտանիքը մեծ էր, եօթը ուրթ դաւակ ունէր, չէր կարանում կերակրել ամեն-մէկին։

Մարտինն սկզբում մեծ նեղութիւն էր կրում քաղաքի մէջ. ծանօթներ չրկային, օտար էր և մենակ ման էր գալիս փողոցներում։ Փող չունէր, որ հաց առնէր, գրքեր գնէր—գրքերը շատ թանդ էին այն ժամանակ. հագուստն էլ հնոտած էր, նորը ճարելու հնար չրկար։

Եւ սկսեց Մարտինը մուրացկանութիւն անել. ման էր գալիս տնէ-տուն մեռելների վրայ սաղմոս կարդալով, կամ երգ էր երգում պատուհանների տակ, որ իրան մի կտոր հաց տան։ Երգում էր Հերովդէս թագաւորի, Մարիամ Կոյսի, Յիսուս Մանուկի մասին։ Տեղ կար, որ տալիս էին մի կտոր հաց կամ մի գռօշ. տեղ էլ կար, որ վզին զարնելով՝ դուրս էին քշում, թէ «Գնա կորիր, քեզ պէս շերջմոլիկներ շատ կան, որ մէկին կերակրենք»։ Ի՞նչ անէր Մարտինը. սուս ու փուս հեռանում էր. այս պատճառով էլ ստէպ սոված էր մնում։

Վերջապէս անտանելի դարձաւ այս դառն վիճակը և Մարտինը վճռեց վերադառնալ ծնողների մօտ։ Ահա դնաց վերջին անգամ մուրալու, որ ճանապարհի պաշար հաւաքէ։ Կանգ առաւ մի մեծ տան առջև խղճալի ձայնով երգեց։ Տան տիկինը մի ողորմած կին էր. ներս կանչեց մուրացկանին և հարցրեց. «Ո՛վ ես, որտեղացի ես, ովքեր են ծը-

նողներդ, որտեղ ես սովորած»։ Պարտինն ամեն բան պատմեց։ Կինը խղճաց նրան։ «Ես կրխնամեմ սրան», մտածեց նա. «Խղճուկն ասես թէ մոլորուած է այս օտար երկրում, իբրև անտառի մէջ. բոլորովին մենակ է, անօգնական»։ — Կինը կերակրեց նրան և ասաց. «Էլի եկ ինձ մօտ»։

Քաղցը խօսքը մարդուս համար նոյն է, ինչպէս գարնան պայծառ օրը. նրանով աղքատի սիրտն անդամ դուարթանում է։

Պարտին վերստին գնաց կնոջ մօտ։ Կինը նրան իւր որդոց հետ միասին սեղան նստացրեց։ Ուտել-խմելուց յետոյ՝ Պարտին մի քանի ժամ այնտեղ մնաց և զանազան բաներ պատմելով այնպէս հաճելի եղաւ նրանց, որ նրանք կսպան, թէ «Պատմիր, էլի պատմիր»։ Պարտին պատմեց. տղայքն էլ այնչափ սիրեցին նրան, որ էլ չէին կամենում բաժանուել։ Տանտիկինը տեսաւ, որ նա մի աչքաբաց, ուշիմ պատանի էր, և ասաց իւր մարդուն. «Պարտինը քիչ-միչ ուսում առած պատանի է. լաւ չէր լինիլ, որ դար, մեր տղայոց էլ գիր կարդալ սովորեցնէր»։—«Ինչո՞ւ չէ», ասաց տանտէրը «իրաւ որ մեր դուակներին էլ ուսում տալու ժամանակ է, թող գայ»։

Այն օրից Պարտին սկսեց դաս տալ հացի համար։ Տանտիկինը գրքեր ընծայեց նրան և հետն իբրև իւր հարազատ որդու հետ էր վարվում։ Այս կնոջ անունն էր Ուրսուլա, ազգանունը — Ձվէյքարթ։ Բարեսիրտ ու գութած էր աղքատների համար. ոչ ոք դատարկ ձեռքով չէր հեռանում նրա շէմքից։ Սիրում էր երաժշտութիւն։ Երեկոները դրացիք հաւաքվում էին նրա մօտ և ուրախ ժամանակ էին անցկացնում, ոմանք քնար ածելով և հոգևոր երգեր երգելով, ոմանք էլ տանտիրոջ հետ զրուցելով։

Պարտին սիրեց այդ ընտանիքն և ընտելացաւ իբրև իւր տան հետ։ Այն օրից սկսած նրա կեանքը թեթևացաւ։ Յերեկները դպրոց էր գնում, իրիկունները՝ Ձվէյքարթ-

ների մոտ, որ տղայի հետ պարապէ և երաժշտութիւն լսէ։ Այս արուեստի վրայ նա այնպէս ոէր կապեց, որ ինքն էլ սկսեց սովորել քնար և սրինդ ածելու։ «Ճշմարիտ է, որ խելօք մարդոց հետ նստել-վերկենալն օգուտ է,—ասում էր ինքն իրան.—ահա ես էլ Ուրսուլայի տան մէջ բոլորովին ուրիշ մարդ դարձայ»։

Վարժարանի ուսումն աւարտելուց յետոյ՝ նա կամեցաւ առաւել բարձր գիտութիւններ ուսանել. այս նպատակին հասնելու համար պէտք էր Համալսարան մտնել (բարձր դպրոց)։ Համալսարանը մի ուրիշ քաղաքի մէջ էր—Էրֆուրթ։ Բայց Մարտին փող չունէր, հօր միջոցներն այժմ էլ չնչին էին. և Մարտին ինչ անելը չգիտէր։ Տանտիկինն իմացաւ նրա վիշտը, հաւաքեց մի քանի արծաթ և նրան տալով՝ ճանապարհ ձգեց։ Մարտին՝ բարև մնաս ասելիս՝ շնորհակալութիւն յայտնեց Ուրսուլային նրա աղ ու հացի և մարդասիրութեան համար և ասաց. «Յաւիտեան պիտի յիշեմ, որ անտուն անտէրիս ձեր տան մէջ ընդունեցիք և հետս սիրով վարուեցաք»։ Այնուհետև գնաց Էրֆուրթ և մտաւ Համալսարան։

Մարտին Լութեր ստէպ ասում էր. «Եթէ Ուրսուլա տանտիկինս չըլինէր, ոչինչ բանի պէտք չէի գալ, մինչև այս օրս քերականի վրայ մաշուելով նստած կըմնայի և առանց մի հիմնաւոր բան գիտենալու՝ դուր տեղը կըկորչէի»։

Համալսարանի մէջ ուսուցանում էին աստուածաբանութիւն, եկեղեցական և աշխարհական օրէնքներ, լատինական լեզու, յունաց լեզու և բժշկական գիտութիւն (մէդիցինա)։

Մի օր Լութեր մի լատինական Աստուածաշունչ գըտաւ գրադարանի մէջ։ Աստուածաշունչն այն ժամանակ մի հաղուագիւտ գիրք էր. ամեն մարդ չէր կարող ձեռք բերել նրան և հասկացողները քիչ էին. միայն պա-

տէրները (քահանաները) և աբեղաները նրան կարդալու իրաւունք ունէին։ Լութեր սուրբ գիրքը որ ձեռք ձգեց, տարաւ իւր սենեակը և թաքցրեց, որ արձակ միջոցին նստի կարդայ։ Ահա սկսեց կարդալ և քիչ-քիչ այնպէս խորունկցաւ, որ էլ չէր կարենում պոկ-գալ գրքից։ Կարդաց սկզբից մինչև վերջը – ծայրէ-ծայր, և երբ աւարտեց, ասաց. «Ճշմարտ լաւ գիրք է այս Աստուածաշունչը. մէջը գեղեցիկ բաներ կան պատմուած Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Մովսէսի և Աստուծոյ բոլոր ընտրեալների մասին. բայց ափսոս, որ գերմաներէն թարգմանուած չէ։ Ժողովուրդը լատիներէն չգիտէ, որ բան հասկանայ. իսկ եթէ գերմաներէն թարգմանուած լինէր, ամեն մարդ սիրով կրկարդար և կարդալով կիմանար, թէ ինչ պարտական է անել և ինչ բան՝ չանել»։

Երկար մտածեց այս մասին. ուզում էր իր սեփական Աստուածաշունչն ունենալ, բայց չգիտէր, թէ ինչպէս ճարէր։ Յետոյ կարդաց Նոր Կտակարանը, Սրբոց վարքը, եկեղեցական հայրերի վարդապետութիւնն և ուրիշ շատ գրքեր։ Սրբերի կեանքին այնպէս հաւնեցաւ, որ ինքն էլ փափագ զգաց բարեպաշտ և Աստուծոյ հաճելի մարդ դառնալու. միայն թէ չգիտէր՝ ինչպէս հասնէր այս նպատակին։ «Ես շատ մեղաւոր մարդ եմ», ասում էր Լութեր ինքն իրան. «Եւ միայն այն ժամանակ փառաբանած կըլինեմ Աստուծուս, երբ մեղքերս քաւեմ. իսկ մեղքերս քաւելու համար՝ պէտք է, որ սրբակրօն վարդապետ դառնամ»։ Եւ ահա այդ միջոցին էր, որ Լութեր վանք մտնելու և այնտեղ փրկութիւն գտնելու միտք յղացաւ. բայց այս մասին ոչ ոքի բան չասաց։

Լութեր լաւ էր ուսանում։ Ուսումն որ աւարտեց, հայրը կամեցաւ որ նա պաշտօնական դառնայ. բայց որդին ուզում էր վարդապետ դառնալ, փախչել սնոտի աշխարհից և Հոգու փրկութեան վրայ խնամք տանել։ Այս-

պէս էլ վարդապետ դարձաւ, և ձեռնադրուելիս՝ ուխտ արաւ երթալ Հռոմ. կամենում էր պապի ոտքը համբուրել և Պետրոս առաքեալի մասունքների վրայ աղօթք անել։

Մի օր գիր ստացաւ հօրից, թէ «Ցայտնի՛ լինի քեզ, Մարտին, մեր թշուառութիւնը. երկու եղբայրներդ, դու շատ ապրես, ժանտախտից մեռան։ Ի՛նչ կըլինի այժմ մեր վիճակը. արդէն ծերացել ենք, առանց քեզ մեր դրրութիւնը շատ ծանր է—վերկաց, մեզ մօտ եկ շուտով»։

Եղբայրների մահը շատ վշտացրեց Մարտինին, վիշտ պատճառեց նրան և հօր հրաւէրը դէպի տուն։—«Ի՛նչ կայ շտապելու, թողէ՛ք որ ուսումս աւարտեմ, յետոյ դամ», գրեց նա ծնողներին, բայց մտքում ուրիշ բան ունէր։ Այս գրելուց յետոյ՝ գնաց իւր մտերիմ բարեկամի մօտ, որ սրրտի դարդը նրան յայտնէ։ Ներս մտաւ, բայց բարեկամը մեռած պառկած էր սեղանի վրայ։ Այս պատահարը էլ աւելի ցաւ ու թախիծ ազդեց նրան։ Մի կողմից ընկերի և եղբայրների մահը, միւս կողմից՝ իւր հոգսերը—չրգիտէր ի՞նչ անէր, վշտերը ո՞ւմ յայտնէր։

Լութեր ա՛յլ ևս մի բարեկամ ունէր Ալէքսանդր անունով. մի օր դրա հետ դաշտ գնաց զբօսնելու։ Մինչդեռ նրանք ման էին գալիս իրարու հետ խօսակցելով, յանկարծ փոթորիկ բարձրացաւ, ամպերն որոտացին, կայծակը փայլատակեց, և Ալէքսանդր շանթահար գետնի վրայ ընկաւ։ Խլացած կանգ առաւ Լութեր, յետոյ սարսափ զգաց. ուզում էր փախչել—չրկարացաւ. իսկ ընկերն անշարժ պառկած էր գետնի վրայ, բոլորովին սևացած։ Հազիւ հազ տուն հասաւ Լութեր և իսկոյն անկողին մրտաւ՝ սաստիկ հիւանդ։

«Ահա վախճանս հասել է», ասաց նա պառկած տեղը և հրամայեց որ քահանային կանչեն։—«Մարտին», ասաց քահանան. «Դու չես մեռնիլ այս հիւանդութիւնից։ Որին որ Աստուած սիրէ, նրան իւր մատով կընտրէ և իւր

խաչը կ'առաքէ։ Մեռնելուդ ժամը դեռ չէ հասած. դեռ պիտի ապրիս և հռչակուիս»։

Այս խօսքերը խոր տպաւորութիւն գործեցին նրա սրտի վրայ։ Նա շուտով թեթևութիւն զգաց և նորից սկսեց աշխատել։ Գրքեր էր կարդում, վանքեր էր յաճախում, միաբաններին հետ խօսակցում, — օգնում էր աղքատներին, տեսնում էր ամեն տեղ տառապանք, հիւանդութիւն, կարօտութիւն և մտածում էր, թէ ինչ կերպով այս աղէտների առաջն առնէր։

Մի օր պէտք եղաւ նրան մի գիւղ երթալ գործի համար։ Դարձեալ ամպերը կուտակուեցան, և նրա աչքի առջև մի ահագին կաղնի ճարճատելով՝ շանթահար տապալուեցաւ։

Զարհուրեցաւ Լութեր և ասաց. «Այս Աստուծոյ նշան է։ Օգնիր ինձ, Տէր։ Ես աբեղայ կրդառնամ»։ Այս խօսքերից յետոյ փոքր ինչ սիրտ առաւ և տուն վերադառնալով, երկու շաբաթ մտածեց — արդեօք պէտք էր վանք երթալ թէ ոչ։ Երկու շաբաթն որ անցաւ, կանչեց բարեկամներին և յայտնեց իւր վճիռը, թէ կամենում է վարդապետ դառնալ։ Բարեկամները չանսացին դարձնել նրան այս վճռից. բայց նա հաստատ մնաց։ Հայրն էլ եկաւ և սկսեց նոյնպէս յորդորել, թէ «Այդ յիմար գաղափարը մտքից դանիր, ես քեզ վարդապետացու պատրաստած չեմ»։—«Չեմ կարող», ասաց Մարտին. «Ես ուխտ եմ արել»։—«Եթէ հօրդ կամքի դէմ ես գնում, ուրեմն ինձ որդի չես», կանչեց հայրը բարկանալով և հեռացաւ՝ առանց բարև մնաս ասելու։

Իսկ վարդապետներն ասում էին. «Ով որ կամենում է մեզ մօտ գալ, պարտական է թողնել հօրն ու մօրը և խաչը գրկել. արդեօք կարող ես այդպէս անել»։—«Աստուծոյ օգնութեամբ», պատասխանեց Մարտին։

Սուրբ Աղէքսանդր Աստուածասէրի տօնի օրը վերս-

տին հրաւիրեց բարեկամներին և ասաց. «Ահա վերջացաւ մեր ընկերութիւնը, մեր ուրախ կեանքը. վերջին անգամն էք տեսնում ինձ այստեղ. վաղն ես կրթաքչեմ վանքի բարձր պարսպի ետև»։ Այն օրն երգեր երգեց, քնարի վրայ նուագեց և բարև մնասի բաժակներ պարպելով ընկերների հետ քէֆ արեց։ Առաւօտեան արդէն վանքումն էր։ Ընկերները դեռ յոյս ունէին, թէ կըյորդորէին նրան կամ վանքից բռնի կըփախցնէին։ Բայց վարդապետները վանքի դռները փակել էին և ներս չէին թողնում նրանց։ —«Այժմ նա ձերը չէ, Աստուծունն է», Ասում էին վարդապետները։ — Ընկերները կանգնեցան, կանգնեցան, և ցրուեցան։

Այն օրից Լութեր վանքի միաբան դարձաւ. փորձութեան ժամանակ նրա վրայ հսկում էր մի աւագ կրօնաւոր։

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)



ԱՇԽԱՏԱՒՈՐԻՆ

(Բիւրդերից)

Ի՞նչ դա՞ կարող ես ամեն օր
Ապրուստի համար աշխատել,
Ամաչի՞ր, ինչպէս չքաւոր,
Բաց ձեռքով ողորմութիւն խնդրել։

***

Երբ կըլինին կորուստներից,
Վշտերից բոլոր-ոյժերդ ոպառուած,
Այն ժամանակ, իմ հպարտ եղբայր,
Հանդիստ տուր քեզ մահով քաղցած։

Ռ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑ

ԿՈՅՐԵՐԻ ԵՒ ԽՈՒԼ ՈՒ ՀԱՄՐԵՐԻ

ԿԱՐԵԿԻՑՆԵՐԸ

Սեպտեմբերի 21-ին 1829 թուին ծնուեց մի աղջիկ, որի անունը դրին Լօրա, Հիւսիսային Ամերիկայի Նոր-Հեմպշիր նահանգում, Բրիջ-մէնի ընտանիքում։ Լօրան էր մի քնքոյշ, գեղեցիկ մանուկ, ունէր պայծառ երկնագոյն աչիկներ. բայց նրա լոյս աշխարհ տեսնելուց իվեր, անպակաս էին նրա գլխից սոսկալի թշուառութիւններ. Լօրան չափազանց թոյլ էր և ենթակայ ջղային ցնցումներին, կամ յուշագնացութեան, որից յաճախ մաղ էր մնում, որ նա զրկուէր կեանքից։ Տարի և կէսից յետոյ ջղային հարուածները դադարեցան, և աղջիկը սկսեց արագաբար աճել և զարգանալ, հիացնելով իւր շրջապատողները իւր աշխուժով և սուր մտառութիւնով։ Ճանկարծ նա դարձեալ հիւանդացաւ աչքերի և ականջների խիստ բորբոքումով։

Հիւանդութիւնը հինգ շաբաթ շարունակուելով, երբ աղջիկը սկսեց առողջանալ, երևաց, որ նա խսպառ դարձել էր կոյր և խուլ ու համր։ Արարչի գեղանի աշխարհը յաւիտեանս դարձաւ նրա համար խաւար և լուռ (համր։ Մոր ժպտալից երեսը, նրա անոյշ ձայնը՝ այլ ևս չէկային խեղճ մանուկի համար։ Ի լրումն այդ ամեն դժբախտութիւնների, ծանր հիւանդութեան մի սարսափելի հետևանքն էլ այն եղաւ, որ նա գրեթէ կորցրեց հոտոտելիքի և ճաշակելիքի ընդունակութիւնը։ Հինգ արտաքին զգայարանքներից, որոնցով մարդս հաղորդվում է երան շրջապատող աշխարհի հետ, նրան մնացել էր միայն մի զգայարանը, այն է շօշափելիքը։

Թվում էր թէ երեխայի իմացողութիւնը ոչինչ պաշար չընդունելով արտաքին աշխարհից, պիտի բթանար և նա պիտի դառնար մի ապուշ։ Սակայն մանուկն ունէր հարուստ հոգեկան կարողութիւն և նրա ներքին կեանքը շուտով սկսեց երևան գալ և զարգանալ տարակերպ եղանակով։ Հէնց որ նա սկսեց ման գալ, իսկոյն ձեռք զարկեց շօշափմունքով

ծանօթանալ իւր կեցած սենեակին և նրա մէջ եղած զանազան իրերին, նրանց ձևին, կշռին, տաքութեան կամ պաղութեան. բռնում էր մօր ձեռքից, հետևում էր նրան, աշխատում էր ըմբռնել նրա շարժմունքները և կրկնել նրանց և այլն: Նա սովորեց մի քիչ գործել ու կարել: Այսուամենայնիւ նրա համար այնքան դժուար էր ծանօթանալ արտաքին աշխարհին և այնքան երկար ժամանակ էր հարկաւորվում մի չնչին բան ըմբռնելու համար, որ ամենատխուր ապագայ էր սպասում Թշուառ աղջկան, եթէ բախտը չուղարկէր նրա համար մի ազատարար, որ էր Բոստոն քաղաքի կոյր և խուլ ու համրերի ապաստանարանի տեսուչը:

Այդ բարի մարդը լսելով խղճուկ մանուկի մասին, գնաց նրա ծնողների մօտ և խնդրեց, որ տան Լօրան իւր ապաստանարանը. հայրն և մայրը համաձայնեցին:

Բոստոնի ապաստանարանը գտնվում էր քաղաքից երկու մղոն հեռու մի գուարճալի և առողջարար տեղ, բարձր բլրի վրայ, որի դէմ վռվում է ծովի գեղեցիկ տեսարանը: Օրինակելի կարգ և մաքրութիւն տիրում են շէնքի ամեն կէտում. երեխաները զետեղուած են օդով և լուսով առատ սենեակներում. այստեղ կայ մի երգեհոն. շատ կոյրեր ունին երաժշտական հարուստ ընդունակութիւն և առհասարակ ամենքը երաժշտութեան ջերմ սիրողներ են: Լօրան ունէր մի գործող ըդգայարանք—շօշափմունք. արդ, ապաստարանում, անձնուէր Հիգ թափելով, դատելու, մտքը, մտածողութիւնը բանեցնելու վարժեցնելով մանուկին, յառաջացնում էին նրա մէջ այն գիտակցութիւնը, որ նա շօշափելի նշանների միջոցով կարող է ձայները—բառերը մտքերը հաղորդել ուրիշին և ընդունել ուրիշից—կարդալ... Երկու խօսքով, մեր սիրելի ընթերցողների հետաքրքրութեա-

նը բաւականութիւն տալու համար, յառաջ բերեմ համառոտակի այդ վարժութիւններից մի երկու օրինակ։ Առաջին վարժերի համար վերցնում են հասարակ ամենագործածական առարկաներ. դրգալ, դանակ, բանալիք, պատառաքաղ և այլն։ Այդ իրերի վրայ կպցնում էին դուրս-ցցած նշանագրերով նրանց անունները. երեխան շոշափելով գալիս է այն եզրակացութեան, որ բանալիքի վրայ եղած նշանագիրը, դանագանվում է դրգալի վրայ եղած նշանագրից, ինչպէս որ դրգալը իւր ձևով տարբերվում է բանալիքից։ Յետոյ առանձին այդ նշանագրերը տալով երեխային, նա ճանաչում էր այն նշանագրերը, որ պատկանում էին բանալիքին, և նրանց, որոնք դրգալինն էին և դնում էր իւրաքանչիւր առարկայի գրանշանը իւր վրայ։ Յետոյ՝ դրգալ և բանալիք բառերի նշանագրերը խառնելով, երեխան կարողանում էր այդ նշանագրերը ծակոտկէն տախտակի վրայ այն կարգով շարել, որ ուղիղ դուրս էին գալիս դրգալ և բանալիք բառերը։

Վերջը նրան ցոյց տուին, որ փոխանակ գրանիշներ շարելու, նա կարող է մատով օդի մէջ ձևացնել գրերի ձևերը. այդ միջոցը ևս խիստ յաջողութիւն ունեցաւ և չափ չը կար այդ յառաջադիմութիւններից յետոյ Լօրայի ցնծութեան։ Դարձեալ մի զարմանալի հանգամանք։ Լօրան խաղում էր, վազվզում էր, այդ իւր կարգաւ. բայց նա սկսեց մտերմանալ իւր դժբախտ ընկերակիցներից մէկին կամ միւսի հետ, մանաւանդ նրանց հետ, որոնք աւելի ընդունակ էին իրան ըմբռնելու, երբ նա մատներով զրուցատրութեան էր մտնում նրանց հետ։ Բացի դրանից նա յատկապէս սիրեց իւր վարժուհիներից մէկին, որին ճանաչում էր շոշափելով նրա հագուստը, ձեռները։

Երբ տարի ու կէս էր անցել Լօրայի ապաստանարան մտնելուց, նրա մայրը եկաւ նրան այցի, որ շատ հետաքրքրական դուրս եկաւ։ Մտնելով այն դահլիճը, ուր Լօրան միւս թշուառ երեխաների հետ զբօսնում էր, մայրը կանգնեց արտասուալից աչքերը յառած իւր սիրասուն դժբախտ դստրիկի վրայ։ Լօրան պատահմամբ մերձենալով նրան, սկսեց շոշափել մօրը իւր սովորական կերպով, որ իմանայ իւր ծանօթ անձներից ո՞ր մին է արդեօք նա։ Բայց նա շուտով հեռացաւ նրանից, չշոշափելով նրա վրայ իրան ծանօթ նշանները։ Այն ժամանակ մայրը մօտեցաւ նրան և տուաւ մի

շարան ուլունք, որով նա խաղում էր տանը։ Լօրան Ճանաչեց իւր շարանը, ուրախացաւ, ձգեց պարանոցովը և աշխատում էր ընկերներին հասկացնել, որ իւր տանից է եկած այդ։ Մայրը փորձեց փայփայել նրան, սակայն նա անտարբեր կերպով շտապում էր հեռանալ նրանից և խառնվում էր իւր ընկերների խմբին. մայրը տուաւ աղջկայ ձեռքը և մի ուրիշ առարկայ, որ բերել էր տնից. աղջիկը շատ հեքաքրքրուեց և այս առարկայով, և կիկին անգամ սկսեց շոշափել անծանօթ տիկինին և ուզում էր հասկացնել իւր ընկերներին, որ դա եկած է իրանց կողմերից։ Խիստ ծանր էր նայել խեղճ մօր վրան, որ յորդ արտասուք էր թափում, տեսնելով որ իւր դուստրը իրան չի Ճանաչում։ Մի քիչ մընալով նա դարձեալ սկսեց աւելի ջերմ կերպով փայփայել և գուրգուրել իւր զաւակին։ Այն ժամանակ աղջկայ գլխում աղօտ կերպով մի միտք ծագեց, որ այդ անձը իրան օտար մէկը չէ։ Աղջիկը կրկին շոշափեց մօր ձեռքերը, կարմրեց և իսկոյն գոյնը թռաւ, երևում էր նրա մէջ կատարուել էր կշռադատելու ներքին մի մտաւոր աշխատանք։ Այդ անյայտութեան ծանը բոպէին, մայրը գրկեց նրան և էլի սկսեց պաչպչել նրան ամենայն քնքշութիւնով։ Աղջկայ տարակուսանքները այդ ժամանակ խսպառ անցան, նա փարուեցաւ նրա պարանոցով, սեղմուեց ամուր կերպով նրա կուրծքին և ինքն էլ սկսեց համբուրել նրան։ Այժմ նա մոռացաւ ուլունքները և խաղալիքը. էլ ուշադրութիւն չէր դարձնում ընկերուհիների վրայ և չէր հեռանում մօրից. Երբ ժամը հասաւ, որ մայրը պիտի մեկներ, Լօրան չէր կարողանում բաժանուել իւր մօրից. նա հեկեկալով հրաժեշտ տուաւ մօրը և ընկաւ վարժուհու գիրկը։

Հին դարերում չեն յիշատակվում թէ եղած լինին փորձեր բարոքելու կոյրերի, մանաւանդ խուլ ու համրերի վիճակը. մինչդեռ կան աւանդութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ կոյրերը մի տեսակ յարգ ունէին դարձեալ. այսպէս, օրինակ, հին պատմութիւնը յիշում է կոյր թագաւորներ, կոյր երգիչներ և այլն. բացի դրանից կարծիք կար, որ մարդիկ գրկուած արտաքին աշխարհը տեսնելու լոյսից, ապրում են աւելի Ճոխ ներքին կեանքով։

Տասն և վեցերորդ դարուց սկսած միայն երևում են Եւրոպայում մարդիկ, որոնք մտածում են այդ թշուառների

մասին։ Այդ միտքը առաջին անգամ ծնեց Սպանիայում. ապա Շվէյցարիայում, Հոլլանդիայում, Ֆրանսիայում և այլն։ Ամենից նշանաւորը եղաւ այդ մասում Ֆրանսիայի աբբատ Միքաէլ Լէպէ, որի հայրը Ճարտարապետ էր Վերսայլի պալատներում։ Սէր ունենալով հոգևոր կոչման՝ նա ձեռնադրուեցաւ քահանայ, սակայն ծուխ չըստացաւ և հալածվում էր ժամանակակից կրօնաւորներից վասըն-զի գաղափարակից չէր կարող լինել նրանց հետ։ Երևում էր, որ նա ընտրուած էր և նշանակուած Նախախնամութիւնից մի մեծ ծառայութիւն մատուցանելու մարդկութեան։



Մի հասարակ դէպք բաց արաւ նրա աչքի առաջ իւր իսկական կոչումը։ Նրան ծանօթ մի վանական քահանայ պարապում էր երկու խուլ ու համր աղջիկների հետ. սակայն հեգ ծերունին մի քանի ամսից յետոյ վախճանուեցաւ, և մանուկները մնացին նոյն ան-ել վիճակի մէջ. տեսնելով այս՝ աբբատ Լէպէն ուխտեց իւր անձը նուիրել ընութեան այդ խորթ զաւակների դժբախտութիւնը թեթևացնելու։ 1760 թուին նա բացեց առաջին դպրոցը խուլ ու համրերի համար, որի պահպանութեան համար ծախսում էր իւր 12,000 ֆր. տարեւորական արդիւնքից տարին 10,000 ֆրանկ, 2000 միայն պահելով իւր համար։

Այդ մարդասիրական հաստատութեան հռչակը շուտով տարածուեցաւ ոչ միայն Փարիզում, այլև Ֆրանսիայի ամեն կողմերը և ամբողջ Եւրոպայում։ Ռուսաց Եկատերինէ կայսերուհին ուղարկեց աբբատ Լէպէին մի նշանաւոր գումար, որ նա քաղաքավարութիւնով հրաժարուեց ընդունել, վասն-զի դեռ իւր սեպհական ազգային կառավարութիւնից չէր ընդունել ոչինչ նպաստ, բացի բանաւոր քաջալերութիւնից։ Նրա դրպ-

րոցը այցելեց Աւստրիայի Յովսէփ II կայսրը, որ ընծայեց Լէպէին մի ծխախոտի աման թանկագին ակներով զարդարած և բաւական ոսկէ դրամ. այլև ամեն ջանք գործ դրաւ կայսրը, որ Ֆրանսական կառավարութիւնը ժամ առաջ ազատվացնէ աբբատ Լէպէի նշանաւոր հիմնարկութիւնը։ Ցիրաւի Ֆրանսական կառավարութիւնը ընդունեց Լէպէի դպրոցը և արքունի գանձարանի ծախսով ապահովեց նրա ապագայ գոյութիւնը, սակայն այդ կատարուեցաւ միայն նրա մահուանից յետոյ, որ տեղի ունեցաւ 1798 թվի, դեկտեմբերի 23-ին. Լէպէն վախճանուեցաւ 77 տարեկան հասակում։

Եկող սերունդը չըմոռացաւ Լէպէի արած ծառայութիւնը ազգին, և կանգնացրեց նրա յիշատակին մի վառաւոր արձան Վերսայլի մէջ 1843 թվին։ Մեծադիր մարմարիոնէ պատուանդանի վրայ կանգնած է Լէպէի արձանը, մի ձեռքը պարզած է դէպի երկինք, իսկ միւսով բռնած է մի տախտակ, որի վրայ խուլ ու համրերի լեզուով՝ մատների զանազան ձևակերպութիւնով՝ գրած է «Աստուած»։

ԱՄԲՐՈՍ

(Կը շարունակուի)

ՆՈՐ ՏԱՐԻ

ս քնած էի։ Խորին դիշերով
Ահա քաղցր երազ. տեսնում եմ պայծառ
Ծաղել է արև ոսկի շողերով,
Եվ չրկար խեղդող այն մահու խաւար։

Եւ սիրտս թնդաց. «Ահա՛, ասացի,
Փոթորիկս անցաւ, հասաւ վառ գարուն.
Բաղդը մարդկութեան բերեց Նոր Տարի—
Փրկութեան այգը, լոյս, ոգեր, գիտութիւն»...

Ցնորքս անցաւ, երբ ես զարթեցայ.
Տխուր ամպերը երկինքը պատած՝
Ծանրացան նորից իմ սրտի վերայ,—
Եւ հառաչեցի ես դարձեալ ճնշուած.
«Ո՛վ անբաղդ երկիր, և այս Նոր Տարին
Չբերեց պայծառ օրուանդ աւետիք.
Կարօտ մնացիր գարնան արևին,
Ծուխի պէս ցնդեց երազդ գողտրիկ»։

Բայց ես լսում եմ. կախարդիչ մի ձայն,
Ինչպէս մրմունջը առաջին սիրոյ,
Ինչպէս թոթովանք մանուկ բերկրութեան,
Ինչպէս լուսաւոր հլեշտակը յուսոյ,
Մեղմ շշնչում է ահա ականջիս.
«Երջանի՞կ է նա, որ այս ցուրտ ձմռան
Մահու շղթայքը շուրջը տեսնելիս
Դեռ երազում է հրաշքները գարնան»...

Ց. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ

Մոսկուա.

ՄԵՆԱՔԷՄ ԳԱՄԱՂԱՅՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Վ. Կօբօլէնկոյից)



I.

Յն ժամանակ Հռոմը Հզօրացաւ և նրա իշխանութիւնը տարածուեցաւ աշխարհի մի ծայրից մինչև միւս ծայրը։

Եւրոպայում Հռոմայեցիք յաղթեցին գալլիացոց և յաղթանդամ գերմանացոց և բրիտանացոց, որոնք պատսպարուած էին բացի ովկիանոսից և պարսպով, և ծովերով շրջապատուած լեռնային Սպանիային։ Այլ և Յունաստանը և Պոնտոսի մօտ ապրող ազգերը և ուրիշ շատերը հպատակուեցան արծուի իշխանութեանը։

Աֆրիկայում Հերակլէսի Սիւներից մինչև Կարմիր ծովը, Կարքեդոնը և եթովպացիք ենթարկուեցան զէնքի զօրութեանը և պարտաւորուեցան պատրաստել մթերքներ,

որով ուրթ ամիս կերակրվում էր Հռովմայեցւոց ազգը։ Բացի այս, նրանք վճարում էին ամեն տեսակ հարկեր և կանխապէս հողում էին Հռովմէական պետութեան պիտոյքը։

Ասիայում յիսուն քաղաք երկրպագում էին Հռովմի միակ գլխին, առանց բազմաթիւ պահանորդների ստիպելուն, բայց միայն բղեշխներին շրջապատող թիկնապահների դանի կապոցներին նայելով։

Եգիպտոսը և Արաբիան, Հնդկաստանի ազգերը և մեղացիք և պարթևացիք, և գոռոզ կիրենացիք որ ծագում են լակեդիմոնացիներից, և մարմարիտացիք և ահռելի սիրտացիք և նասամոնները և մաւրերը և նումիդիացիք և ուրիշ շատ ազգեր—բոլորն էլ չկարողացան ընդդիմանալ լեգէոնների քաջութեանը։

Այլ զինաթափ եղած խոնարհեցան լծի տակ և դողում էին...

Դողում էին արդէն ոչ թէ աշխարհակալների սուսերի առաջ, այլ թիկնապահների դանի կապոցների առաջ, որ ազգերի միտն էին քցում նրանց նշաւակելի ստրկութիւնը։

Դիմադրող չկար աւարառութեանը, մարդիկների ձեռները թուլացան մահուան անգօրութեամբ, ազատութեան կողմը նայող աչքերը փակուեցան. պաշտպանուելու հրաւիրող ձայները լռեցին... Եւ սարսափով լռած աշխարհի վրայ բարձրացաւ հռովմէական արծիւը, և հռովմի իշխանութիւնը տարածուեցաւ ստրկութեան երկրի վրայ... Եւ խաղաղութիւն տիրեց մի ժամանակ աշխարհին։ Բայց խաղաղութիւնը չէ թէ բարգաւաճութիւն և բարիք բերեց, այլ չարիք։ Զիթենի չէր ծաղկում կեանքի արտումը, այլ փուշ ու տատասկ, որովհետև կեանքի արտը շնորհատու անձրևով չէր ջրվում, այլ ստրկութեան արիւնալի քրտնքով, և ճնշուածների հառաչանքն էր երկրի վրայ մի ծայրից միւս ծայրը...

Եւ բարիք չէկար նաև Հռովմայեցիների համար, որ կերակրվում էին ստրկութեան պտուղներով. այս պտուղներից ազգի մէջ տարածվում էր թոյնը, որով ամենից առաջ թունաւորուեցան իշխողները։

*
* *

Առաջին կեսարները, դիմադրութիւն և հակառակութիւն տեսնելով, ոչ միայն խստասրտութեամբ, այլ և բարեմտութեամբ ստիպուած էին վարժուել. բարեմիտ հեզութեան հնարներով նրանք գրաւում էին նրանց, որոնց բազուկները դեռ կարող էին սրերով պաշտպանել ազատութիւնը. մարդասիրութեան ծաղիկների տակ նրանք ծածկում էին ստրկութեան շղթաները, որ ազատութեան հպարտ որդոց մէջ չըզարթեցնեն կռուի մէջ մեռնելու ցանկութիւնը։

Եւ այս պատճառով, Հրէաստանը նուաճելուց յետոյ, թողին ժողովրդին հայրերի օրէնքները, և Մի Աստուծոյ հաւատը և սեպհական կառավարութիւնը։ Իսկ տաճարի սահմանները ոտ կոխելը զինուորներին արգելեցին մահու սպառնալիքով։

Բայց ահա ազատութեան համար մարտնչելու ձայները լռեցին ամեն տեղ, դադարեցաւ աշխարհակալների բռնակալութեանը դիմադրելը. աշխարհը խոնարհեցաւ թուլացած, մի-մի տեղ միայն անզօր կերպով շղթաները թոթափելով։

Եւ այսպէս անցնում էին տարիներ։ Հռովմայեցիք ընտելանում էին հրամայելու. աշխարհն ընտելանում էր հնազանդուելու։ Հռովմի սրտումը աճում էր մեծամտութիւն ու դոռոզութիւն։ Նա մտածում էր. «ո՞վ կըյանդգնի այժմ»։ Եւ պատասխանում էր. «ոչ ոք»։ Իսկ մնացեալ աշխարհումն ստրկութիւնն արմատացնում էր երկիւղի և ստոր հպատակութեան սովորութիւններ։

Եւ Հռովմը դոռում էր տիեզերքի վրայ, ինչպէս գո-

ռում է գիշերով գիշատիչ առիւծը Լիբիայի անապատումը։ Իսկ տիեզերքը, ինչպէս անապատ ստրկութեան խաւարի ու լռութեան մէջ, ահով ականջ էր դնում բռնակալի գոռոցին, յիշելով Հայրերի տառապանքը, բայց նրանց արութիւնը մոռացած։

Եւ քանի որ հետզհետէ լռում էր ազգերի մէջ բարկութեան սուրբ զգացմունքը, — հռովմում կորչում էր բարեխոհութեան չափը։

Զքանում էր նրա իշխողների իմաստութիւնը, որ ստիպում էր խնայել ազգերին, և նրա փոխարէն գլուխ էին բարձրացնում շահը, կոյր գոռոզութիւնը և արիւնարշտութիւնը, առանց դիմադրութեան արգելքների հանդիպելու։

Յուլիոս և Օգոստոս կեսարներից յետոյ թագաւորեց կատաղի Տիբերիոսը, իսկ նորանից յետոյ անմիտ Կայոսը, որ մտքումը դրել էր գլխատել տիեզերքը Հռովմը գլխատելով։ Եւ վերջապէս խելագար Կլաւդիոսից յետոյ՝ ամենանանգութը մահկանացուներից՝ Ներոնը, ոտնակոխ էր անում Աստուծոյ և բնութեան օրէնքները կայսերական գահի բարձրութիւնից, տիեզերքի աչքի առաջ։ Լերան բարձրութեան վրայ դրեց նա անբարոյականութեան առագաստը, առաքինութեան անունն իսկ ծաղրելով, և անմեղների արիւնով ջրեց դողացող երկիրը...

* * *

Իսկ Հրէաստանում վաղուց արդէն ոչ Հեղաբարոյ Պետրոնիոսը կար, ոչ էլ Պիղատոսը, որ մի ժամանակ դուրս հանել տուեց սրբազան քաղաքից դրօշները, որոնց վրայ կայսեր պատկերը կար, որ չբվիրաւորէ ազգային զգացմունքը։ Այլ Ալբինոս կուսակալը, մի ագահ և անդութ և աւազակաբարոյ մարդ, ամեն չարիք թափում էր անպաշտպանների գլխին, այնպէս որ ոչ մի ոճիր չկար, որ նա գործած չլինէր։

Որովհետև կարգապահութեան համար նշանակուած նիզակաւորներին նա գործ էր ածում խաղաղ ապրողներին կողոպտելու համար։ Խօսքի ազատութիւնը խլած էր և դատապարտելու կամ դանգատուելու համար ձայն բարձրացնել չէր համարձակում ոչ ոք, մինչդեռ իշխանութիւն էին բանացնում շատերը։ Ոչ ոք ոյժ չունէր արդար պաշտպանութիւն անելու համար, բայց կողոպտել և զրկել կարող էր ամեն մէկը, ով որ ոյժ ունէր։

Այսպէս բազմանում էր ճնշուածների և հնազանդուածների տառապանքը...

Ց. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏԻՊԵՐ

ՀԱԿԱՊԱՏԿԵՐ

(Օմուլեվսկուց)

Ո՜հ, որքա՛ն չքնաղ է այս աշխարհում
Ամեն ինչ.—չքնաղ նաև բնութիւն.
Եւ որչա՛փ նոցա շքեղ խնջոյքում
Պիտ խնդար հոգին, զգար քաղցրութիւն:

Բայց ընդհակառակն՝ կապոյտ երկնի տակ,
Ուր պատրաստվում է այդ մեծ խնջոյքը,
Մարդկանց ծովացած դառն արցունքներում
Ողողուել կարէ ամբողջ աշխարհքը . . .

Ե՛ւ մաղձ, և՛ թոյն, և՛ քաղց, և՛ կական,
Ե՛ւ սոսկ աշխատանք անվերջ ու դաժան,
Ճնշում են մարդկանց, որպէս ծանր մուրճ,
Եւ խնդում, հրճւում այստեղ մշտական . . .

Միայն երբեմն շատ երկչոտ կերպով,
Որպէս ըստուերը պարզ ու ջինջ օրուայ,
Շողում է բաղդը արագ թռչելով
Ոմանց քուն մտած դէմքերի վերայ . . :

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Մոսկուա.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դիսանդէից)

ԱԶԲ ԵՒ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆՔՆԵՐ.

Այս ամենից զարմանալի օրինակն է № 1 նկարը: Այդ նկարի վրայի սև շերտերը իսկապէս զուգահեռական են, սակայն նրանց ծայրերը թւում են կամ դէպ իրար մօտեցող, կամ իրարից տարակայող, հակառակ այդ սև շերտերի վրայ գտնւող շեղ փոքրիկ շերտիկների ուղղութեան. մի և նոյն ժամանակ այս վերջինները՝ շեղ շերտերը, համապատասխան կերպով տեղափոխուած են թւում: Այստեղից կարելի է հետևցնել այս որ զուգահեռական և թեք գծերի ուղղութիւնն աւելի թոյլ է ենթարկվում մեր աչքին թուացող փոփոխութիւններին, քան այն գծերը, որոնք կտրում են մեր հայեցողութեան դաշտը հակառակ շեղութիւնով: Դեռ ևս հազարաւոր տարիներով առաջ յայտնի էր հռովմայեցիներին շեղ գծերի ներգործութիւնը աչքի տեսու-


(№ 1)

թեան վրայ. այդ նշմարվում է Պոմպէոս քաղաքի աւերակների մէջ գտնուած քանդակներից. մեր ժամանակում փորագրիչները այդ ինկատի ունին և հաշուի են առնում այն տպաւորութիւնը, որը շեղ գծերի ազդեցութիւնով կըստացուի պատկերից: Մի քանի զարդարուն բանուածքներում, ուր այդ երևոյթը աչքի առաջ չեն ունեցել, զուգահեռական գծերը չեն երևում իսկապէս զուգահեռական, նրանց կից գտնվող շեղ գծերի պատճառով: Այդպիսի մի օրինակ կարելի է տեսնել Փարիզի Լիոնեան երկաթուղու կայարանի մեծ դահլիճի առաստաղի վրայ, որ մանր զուգաւոր տախտակներով զարդարած է Վինդերեան ճաշակով և զուգահեռականները կորացած են երևում, վերոյիշեալ պատճառով:

Մենք այժմ կանցնենք մի շարք վորձերի, կամ զորձիքների տեսութեան, որոնք հիմնուած են տեսողական պատրանքների շնորհիւ, որ յառաջ է գալիս աչքի ուռտինի այն ընդունակութիւնից, որ նա կարողանում է առվայր-մի իր մէջ ըմբրունած տպաւորութիւնը պահել: Տ ո մ ա տ ր օ պ կոչուած խաղալիքը յայտնի է



(№ 2)

շատ հին ժամանակից ի վեր և շինուած է վերոյիշեալ սկզբունքի հիման վրայ: Այդ խաղալիքը, որի կերպը դուք տեսնում էք այստեղ № 2 պատկերի վրայ, շինուած է այսպէս. մի հաստ թղթէ—կարտոնի—դիսկի կամ լիսեռնի՝ շրջանակի մի երեսին նկարած է մի վանդակ, իսկ միւս երեսին մի թռչնակ. եթէ այդ դիսկի կամ լիսեռնիկի երկու կողմից ամրացնենք թելեր և երկու ձեռքի միջոցով պտտենք դիսկը, այն ժամանակ աչքը կարող է տեսնել երկու նկարը միաժամանակ, այդպիսով մեզ թւում է թէ տեսնում ենք միայն մի պատկեր, որը ներկայացնում է մի վանդակ, մէջը մի թռչնակ, ինչպէս ցոյց է տուած № 3 պատկերի վրայ:

Այդ հիման վրայ շինում են մի ուրիշ խաղալիք, որ աւելի հետաքրքրական է. այսինքն որ և է զորձողու-

թիւն, օրինակ որս անելը, նկարվում է սկզբից մինչև վերջը հետզհետէ յաջորդող մանրամասնութիւններով թղթի վրայ և դրվում է մի կլոր արկղիկի մէջ, որի պատերի վրայ բացուածքներ կան պատկերի իւրաքանչիւր յաջորդական փոփոխութիւնը կարգով ցոյց տալու համար. արդ, երբ մենք սկսենք պտոյտ տալ այդպիսի մի գործիք, մի և նոյն գործողութեան զանազան աստիճանները ներկայացնող պատկերները հետզհետէ ներկայանալով մեր տե-



(№ 3)

սութեան՝ թւում են իսկապէս թէ՝ նոյն իսկ գործողութիւնն է, որ կենդանի կերպով կատարվում է մեր աչքի առաջ: Այսպիսի փորձերի շատ բարդ և կատարելագործեալ տեսակները կան, որոնց նկարագրութիւնն առ այժմ մենք թողնում ենք ուրիշ պատեհ ժամանակի. հիմա մենք կըշտապենք հարևանցօրէն յիշել դարձեալ մի քանի այսպէս ասած աչքախաբութիւններ, որոնց թիւը այնքան շատ է սակայն, որ մեր առաջ բերածները հատընտիր օրինակներ են միայն, ընդհանրապէս մի թեթև գաղափար կազմելու համար հայեցողական գործարանների ընդունակութիւնների մասին, որոնց մեծ մասը դեռ ևս բացատրութեան կարօտ է գիտութեան կողմից:

ԽԱՉԻԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ԺԲ.

ՄՈՋԱԻԿԱ

արեպաշտ և բնակավայրի հողն ու ջուրը ջերմ սիրող հայը այցի կամ ուխտի գնալով բնագաւառի նուիրական վայրերին, ամեն հոգևոր մխիթարութիւններ ու զուարճութիւններ ընդունելուց յետոյ՝ նրանցից բաժանուելիս՝ առնում է սրբավայրից մի բուռն հող, այնտեղ զգացած քաղցրութիւնների յիշատակը անմոռաց պահելու համար իր տանը։ Այդ օրինակ՝ երբ գունդագունդ ուխտաւորները հռչակաւոր Սևան մենաստանից մեկնելով՝ նաւակներից ոտ են դնում ցամաք, լճակի ափերում աւազի պէս գեղուած բազմագունեղ մանր, դարերով ալիքների զարնուածքից լոսված, կլորիկ, տափարակ, ձուաձև, անհուն խճերից առնում են մի-մի թաշկինակ կամ պարկ լիքը ու տանում են իրանց գիւղը կամ քաղաքը։

Այս իսկ խճերը դտնուելով նոյնպէս և ջրի տակ լճի ոչ խոր եզերում՝ անսահման ժամանակների ընթացքում ջրի կազմող ուժով խառնուելով աւազի հետ ու միաւորուելով կրային ատոմներով՝ դարձել են խոշոր-խոշոր խայտաբղէտ գանգուած — սալեր ու այնպէս կարծը, որպիսին կարող է միայն յառաջ բերել բնութիւնը. այդ սալերն են իսկապէս մի տեսակ բնական մօզաիկա, որոնց վրծեցնելով ջրի յատակից՝ շերտ-շերտ գոյծ են ածում ուղիներ պողոտելու. սակայն եթէ դրանք յղկուէին կարող էին շատ գեղեցիկ, ամուր, խոնաւութիւն չընթողնող խուցերի ու սենեակների յատակամած դառնալ։

Երվինեանդ գունաւոր քարերի կտորները Ճաշակաւոր

և կանոնաւոր ձևերով լրաբ յերիւրուելով՝ կազմելով որպէս մի ամբողջ՝ կոչվում է մոզաիկա։ Այս իմ նամակն էլ զանազան բաւական հետաքրքրական հատընտիր տեղեկութիւններից յօրինելով, կազմեցի բանաւոր կամ գրական մոզաիկա, որ կրում է նամակիս խորագիրը։

Սևանը այցելող ուխտաւորների գլխաւոր զուարճութիւններից մէկն էլ՝ է կղզու շուրջը պտտել նաւակով, որ տևում է կէս ժամ, եթէ արագ թիավարուի. երբ նաւարկելով հասնում էք մինչև կղզու արևելեան սեպացած ափի հանդէպ, նկատում էք ժայռերի ճակատի վերայի խոր փորուածներ, իսկ փոքրիկ կիրճերում՝ խոշալի հիւղեր. դրանք վաղնջական մարդկանց ճգնարաններն են...

Այս կղզու վրայ ամառը գտնվում են գորշ և սև վայրենի բադերի խումբեր, որոնք շարունակ լողալով լճի երեսին, յանկարծ սլանում են կղզու կատարը. այդ բադերից որսալու համար գալիս են Սևան Ծաղկոցաձորի ամարանոցը օդափոխութեան դուրս եկած հարուստ երիտասարդները։ Ցիշեալ բադերի միսը մուրթ կարմիր, ուժեղ և անախորժ է։

Վերափոխման տօնի օրը հանդիպելով Սևանի մենաստանում, երբ սովորական կերպով ուխտաւորների մեծ բազմութիւն է լինում, ես նկատեցի հետևեալ՝ ինչպէս երևում է հին կռապաշտական սովորութիւնը կիների մէջ. սրանք մրտնելով տաճարը, ոչ թէ այնքան խաչակնքում էին, որքան զոյգ ձեռներով մատների ծայրերը շրթունքներին կպցնելով համբոյրներ էին ղրկում դէպի սեղանը, խաչերը, պատկերները և այլն. այդ մի տարօրինակ տպաւորութիւն էր անում մարդու վրայ, որ չէր տեսել այդպիսի մի բան։

Ուխտաւոր կիների այդ խուռներամ բազմութեան մէջ աչքի էին ընկնում այդ կողմերի գեղանի օրիորդների պարանոցի և կրծքի մանեկաձև զարդերը. կիները կախում են ոսկի կամ արծաթի դրամների մի շարան, իսկ աղջիկներին վերապահուած է յատկապէս խաչ կրելու սովորութիւնը. նկատելին այն է, որ օրիորդների կրծքին կախած խաչերը շատ յաճախ գարմանք էին պատճառում իրենց անսովոր մեծութեամբ, որը հաւասարում էին մի վարդապետական շքաղիր խաչի, որ կրում են նրանք կրծքի վրայ։

Ի դէպ աւելորդ չը լինի յիշել այն հանգանանքը թէ ինչպէս են մեծացնում և պահպանում աղջիկներին այդ գա-

ւառում — Գեղարքունիքում։ Նախ այս պէտք է ասել, որ այդ երկրում աղջիկներին ծախում են համարեա թէ և ոչ թէ մարդու են տալիս այնպէս, ինչպէս ընդունուած է քրիստոնեայ աշխարհում. և բացարձակապէս աւելի գեղեցիկ աղջկայ համար, նրան ցանկացող վիճացուն աւելի է վճարում նրա հօրը (մինչև 300—400 ռ.). այդպիսով աղջկայ կամ վիճացուի դիրքը, կարողութիւնը, նրանց համակրութիւնները և այլն երկրորդական նշանակութիւն ունին. ի հարկէ այդ պարագայն պատճառ է լինում յաճախ երիտասարդների դժբախտութեան և ընտանեկան փոթորիկների, որոնք մինչև իսկ վերջանում են սարսափելի ոճրագործութիւններով։ Զընայելով հոգևոր իշխանութեան յորդորներին, խրատներին և նզովքներին անգամ, այդ բարբարոսական սովորութիւնը բուռն կերպով պահպանում է իր գոյութիւնը ժողովրդի թանձր տգիտութեան խաւարի շնորհիւ։ Գորովագութ մայրը ի նկատի ունենալով որ իր աղջկայ բախտը կախուած է նրա գեղեցկութեան գնահատումից, ամեն ջանք գործ է դնում նրա գեղը աւելցնելու և փայլեցնելու. ուստի կարելին չափ աշխատում է նրան հանապազօրեայ մաքուր հագցնելու, թոյլ չեն տալիս նրան անային ծանր գործեր կատարելու, աղջիկները վայելում են աչքի զարնող ազատութիւն, վարում են ըզբօսասէր և ուրախ կեանք, մայրը ամենայն հոգացողութեամբ տան ամեն քաղցը և սննդարար պաշարը անպատճառ ուտեցնում է աղջիկներին. սէր, կարագ սպառողներն են այդ կողմերի հայ ընտանիքներում բացառապէս աղջիկները, որոնց պատմական «փափկասուն» ածական տալը՝ այդպիսով բոլորովին իրաւացի է։

Սևանի ափերում կան շատ գիւղեր, բայց լՀի վրայ նաւագնացութեամբ ամբողջապէս պարապում են Նորադուսցիք և մասամբ Ղշլարցիք։ Նորադուս բաւական մեծ հայաբնակ, սակայն աղքատ գիւղ է. մէջը կանգնած է խիստ բարձրաշէն մի վիթխարի կոփածոյ քարերից կառուցուած ուղղափառ հասկիր սարուայ եկեղեցի, որի կամարները թէպէտ փլուած են, բայց տախտակամածով կարկատուելով՝ ծառայում է ժողովրդին որպէս աղօթատեղի։ Եկեղեցու հարաւային պատի վրայ անխախտ մնում է մինչև հիմա մի արևի կամ արեգակնային ժամացոյց. դա է մի քառորդ արշինաչափ երկաթէ ձողիկ ամրացրած մի սալ քարի վրայ ուղղահայեաց, մի կի-

սաղջանի կետրոնում, որ բաժանուած է շառաւիղներով տասներկու մասի և ամեն մասում վորագրաուած է Ա, Բ, մինչև ԺԲ.=1—12։



Նորադուսի եկեղեցու հարաւային պատի վրայ գտնուած արեգակնային ժամացոյցի պատկերը։

Նորադուսում մի մասնաւոր տան գտնվում է մի քառաթեւ արծաթէ մեծ խաչ՝ խոշոր ակներով զարդարած, որ կոչվում է Ս. Նշան, Քրիստոսի խաչափայտից իր մէջ կրելուն համար, և մի մագաղաթեայ ձեռագիր արծաթասպատ աւետարան. այդ սրբութիւններին ուխտի է գալիս շատ ժողովուրդ և բաւական արդիւնք է բերում տանտէրին, որից չի կարողանում կորզել այդ հնութիւնները հոգևոր իշխանութիւնը։

Այս գիւղից դէպի հարաւ մի վերստ հեռաւորութեամբ դաշտի մէջ կանգուն անարատ կենում է մի հին, հիանալի, խիստ փոքրիկ, գեղեցիկ, գողտրիկ, անսիւն, սուր գմբեթաւոր եկեղեցի Ս. Գ. Լուսաւորիչ անունով, որի ներսը պատերի վրայ կան շատ արձանագրութիւններ անտեղեակ և շատ պարզ ընթռնելի և պատմական տեսակէտից շատ հետաքրքրական։ Լուսաւորչի երեք տօներին ժողովուրդը ուխտի է գալիս այստեղ։

Նաւակները պատրաստում են նոյն իսկ Նորադուսցիք և առաւելապէս Ղշլաղցիք. այդ նաւակները ունին միայն մի կայմ, որից քամի եղած ժամանակ կախում են առագաստը, որով աւանց թիավարելու չուում է նաւակը։ Նորադուսը գտնվում է լճի հարաւային ափում. նրա դէմուդէմ, արևելեան ափում, գտնվում է Շորժա ուռս աւանը. Նորադուսի և Շորժայի մէջը եղած տարածութիւնն է լճի ամենանեղ տեղը՝ տասը վերստ, որը կտրում են նաւակները երեք ժամուայ ընթացքում։ Գրեթէ ամենայն օր կանոնաւորապէս Նորադուսից մի նաւակ է դուրս գալիս տեղափոխութեան համար առաւօտեան 7 ժամին դէպի Շորժա։ Իսկ լճի զանա-

զան կէտերից մթերքների տեղափոխութեան համար Նորացուցիք նաւագնացութիւնը սկսում են սեպտեմբերից մինչև մայիս։ Լճի երկարութիւնով մի ծայրից մինչև միւսը (70 վերստ) ապրանքներ կրելու համար մի խալվարին առնում են երկու ռուբլի։ Ամբողջ գաւառում Նորացուցիք յայտնի են, որպէս լճի վրայի նաւագնացութեան սեպհականներ. ջուրը, ինչպէս յայտնի է, միշտ գրաւիչ է եղել մարդկանց համար, չընայած այն բազմաթիւ դժբաղդ արկածներին, որ պատահում են նրա վրայ։

Գեղամայ լճի ափերում կան չորս ռուսաբնակ գիւղեր, որոնք եմիջի այլոց ընդարձակ չափով պարապում են սագապահութեամբ. այդտեղ Ճանապարհորդելիս ուղևորը նկատում է սագերի բազմաթիւ երամներ, որոնք շարան-շարան արածում են լճի եզերում հսկողութեամբ մանուկների կամ ծերունիների. հայ գիւղերից միայն Օրտակլուն սակաւ պահում է սագերի ջոկեր։

Այս կողմերում, մանաւանդ մօտակայ Ծորափորի (Ղազալու) գաւառում, բարձր ժայռերի և բլուրների կատարների վրայ տեղ-տեղ կան կիսաւեր ամայի աշտարակներ, որոնց Ծորափորի գիւղացիները անուանում են դիտեան. այդ բառի բացատրութիւնը, ինչպէս անում է այժմ ժողովուրդը հարցասէրին մի և նոյն է դուրս, գալիս եթէ ասէինք ռազմական դիտանոց, որ այդպիսով համանիշ է դիտեան գեղեցիկ բառին, որ իր գոյութիւնը պահպանել է ժողովրդի բերանում։

Ն. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի օրիորդի հերոսական սխրագործութիւնը։—Այս աշնան Ս. Պետերբուրգում, Վիբորգ կոչուած թաղում, մի աղարակում՝ վեցամեայ Դիմիտրի անունով մի տղայ, խաղի միջոցին, իւր փայտը ձգեց մի հորի մէջ, որ 5 արշին խորութիւն ունէր. փայտը դուրս հանելու մտքով, երեխան մօտեցաւ հորին եւ ինքն էլ ընկաւ նրա մէջ խորասուզուելով ջրի տակ։ Հաւաքուեցան մի քանի մարդիկ նրանց թուում կար եւ մի աղջիկ 14 տարեկան։ Նա շուտով հանուեցաւ եւ միայն շապիկը հագին մտաւ հորը։ Աղջիկը բանիցս սուզուեցաւ ջրի մէջ, չընայելով որ նա լցուած էր կեղտոտ հոտած ջրով, որ դնում էր պարտէզը ջրելու համար։ Հուսկուրեմն անձնուրաց օրիորդին յաջողուեց դուրս քաշել տղային, որ ժողովուած ամբոխի ջանքով յուշի բերուեցաւ եւ նրա դժբախտութիւնը այսչափ միայն եղաւ, որ նա մի առժամանակ հիւանդ պառկեց. Աղջիկն էլ մի քիչ հիւանդացաւ։ Այդ օրինակ անձնանուէր քաջագործութիւնը մի օրիորդի՝ բարեհաճեց ունկնդրել Վեհափառ տէր կայսրը այս տարուայ սեպտեմբերի 2-ին եւ ամենաողորմածաբար հրամայեց. 14 տարեկան օրիորդ Անիսիա Նիկիֆորովնային պարգեւատրել արծաթեայ մեդալով վրան դրոշմած՝ «վտանգուածներին փրկելու համար» միանուագ ընծայել 25 ռուբլի, այլ եւ տէր Վեհափառի անձնական դումարից ամսական նպաստ տալ յիշեալ օրիորդին 5 ռուբլի մինչեւ նրա ամուսնանալը, իսկ պսակուելու միջոցին տալ 200 ռուբլի պարգեւ։ Օրիորդ Անիսիա Նիկոֆորովնան հայր չունի եւ մօր հետ է կենում, որ կաթ ծախելով էր ապրում մի կերպ։ Ս. Պետերբուրգի քաղաքային խորհրդարանը իր կողմից վճռել է հոգալ օրիորդի կրթութեան մասին քաղաքային որ եւ է դպրոցում։

—

Հսկայական ստամոքս։ Մոտերս հրդեհ պատահելով մի զաղանանոցում Ամերիկայի Բրիջօսորտ քաղաքում, այրուեցաւ ի թիւս այլոց եւ. մի փիղ՝ Ալիսա անունով։ Երբ պատուեցին նրա ստամոքսը, նրա մէջ գտան 300 պղնձէ դրամ, մի դրչահատ, մի ծեռնափայտի գլուխ, արճիճի խողովակի կտոր եւ մի քանի փայտի կտորներ։

—

Պարսկաստանի կարգերը։ Դավրէժում հայոց եկեղեցիները չունին խաչ իրենց գլուխը եւ չեն գործ ածում զանգեր, որ խիստ արգելուած է մոլեռանդ պարսիկ հոգեւորականներից. միայն եկեղեցու ներսը կախում են մի պստլիկ զանգակիկ ի մխիթարութիւն Քրիստոսի հօտին։

—

ՀԱՒԿԻԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Երբոլհետև հիմա մեր երկրից արտահանուել է սկսուել և ձուի դեղնուցն ու սպիտակուցը հեղուկ կերպով, ուստի այդ մասին աւելորդ չենք համարում մի համառօտ ծանօթութիւն տալ այդ մասին մեր ընթերցողներին։ Արտասահմանում վաղուց գործ էր դրվում հաւկիթի սպիտակուցը և դեղնուցը առանձին ինչպէս հեղուկ կամ չորցրած ու փոշեացրած։ Այս արտադրութիւնն արդէն քանի տարուց իվեր պատրաստվում է և Ռուսաստան. օրինակ այդպիսի մի գործարան այժմ կայ Վօլինսկի նահանգի Շեպետօվկա աւանում։ Գործարանում մեծ կաթսաների մօտ նստած են բանւոր աղջիկները, որոնց մօտ դրած են ձուերով լի կողովները. աղջիկները զարմանալի արագութեամբ և ճարպիկութեամբ կոտրում են ձուերը և ձգում կաթսաների մէջ՝ դեղնուցն առանձին, սպիտակուցն առանձին։ Երկու աղջիկ օրական ջարդում են 7,800 ձու։ Գործարանում օրական ջարդվում է 60,000 ձու։ Սպիտակուցը ցինկի ամաններում դնում են գործարանի առանձին չորցնելու բաժանմունքում, ուր 45 աստիճան տաքութիւնով սպիտակուցը չորանում է 12 ժամուայ մէջ։ Չորցրած սպիտակուցը ածելով արկղների մէջ՝ ղրկում են վաճառելու։ Չորացրած սպիտակուցը գործ է ածվում կերակուրի համար, գործարաններում բարձր տեսակի կտաւեղէններին խաւութիւն տալու համար, նոյնպէս յախճապակէ և բիւրեղեայ իրեղէնների համար։—Իսկ դեղնուցը լաւ խառնելուց ու միակերպ թանձր հեղուկ դարձնելուց յետոյ, աղ են անում և ածում տակառների մէջ։ Այդ տեսակ պատրաստած դեղնուցը երկար ժամանակ պահպանվում է, գործ է ածվում կերակուրի և գործարանական պէտքերի, մանաւանդ բարակ կաշի յղկելու համար։

ԽՆԴԻՐ

Առաջ. Դ. Տ.-Ղ.

Երկու շոգեկառք՝ ա-ն բ-ն ունենալով իրանց հետ 20-ական վագոն, Հանդիպեցան իրար: Ի՞նչպէս պէտք է վարուել, որ նրանք գնան նոյն ուղութիւնով, երբ յայտնի է որ ընդհանուր ուղիի կողքից միայն երեք վագոն տեղաւորելու տեղ կայ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԹԻՒ

Եթէ 3367 բազմապատկենք 3-ով վերցրած 1, 2, 3, 4,...63, 64, 65, 66, 67.... 97, 98 և 99 անգամ, իւրաքանչիւր ստացուած արտադրեալը բաղկացած կըլինի երկու միատեսակ թուանշաններից բացի մի քանի արտադրեալից, որոնց թուանշանները բոլորը միատեսակ կըլինին.

3367×3 =10101,	3367×39 =131313,
3367×6 =20202,	3367×42 =141414,
3367×9 =30303,	3367×45 =151515,
3367×12=40404,	3367×48 =161616,
3367×15=50505,	3367×51 =717171,
3367×18=60606,	3367×54 =181818,
3367×21=70707,	3367×57 =191919,
3367×24=80808,	3367×60 =202020,
3367×27=90909,	3367×63 =212121,
3367×30=101010,	3367×66 =222222....
3367×33=111111,	3367×294=989898 և
3367×36=121212,	3367×297=999999.

Որովհետև «Աղբիւրի» բաժանորդագրութիւնը դեռ շարունակվում է, այդ պատճառով ներկայ №-ում տպուելի ՐԵԲՈՒՍԸ, որի վճռողը պիտի ստանայ 10000 հատ փոստային մարկաներ ՄՐՅԱՆԱԿ, չը տպագրեցինք, պահելով այն առաջիկայ № 2-ում զետեղելու:

ՇԱԽՄԱՏ

Շախմատ հռչակաւոր խաղի բոլոր պարագաները ստացած լինելով՝ «Աղբիւրի» այս համարից սկսում ենք այդ սրամիտ խաղը իւր ամեն կերպերով զետեղել և տալ ամենամանրամասն բացատրութիւններ մեր ընթերցողների պիտանի զուարճութիւնների պաշարը աւելացնելու համար: Աւելորդ է ասել որ այս խաղի ամեն նրբութիւնները ըմբռնելու և ճարտար խաղացող դուրս գալու համար, անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն նուիրել դրան:

Շախմատի մէջ խաղացողները լինում են երկու անձ. թէպէտ երբեմն այդ կանոնից դուրս լինում են երեք և



չորս հոգի խաղացողներ, բայց այդ ոչինչ նշանակութիւն չունի, վասն-զի հիմնական կանոնը նոյն է մնում, որ պիտի բացատրենք յետոյ:

Շախմատ խաղալու համար հարկաւոր է շախմատի տախտակը և 32 ֆիգուրներ, որոնց մեծութիւնը պիտի համապատասխանէ տախտակի չափին:

Շախմատի տախտակը բաժանած է 64 հաւասար

քառակուսիների. այդ քառակուսիները փոխ-առ-փոխ պիտի լինին բաց (սպիտակ) և մութ (սև) դոյներով։

8	ա8	բ8	գ8	դ8	ե8	զ8	է8	ը8
7	ա7	բ7	գ7	դ7	ե7	զ7	է7	ը7
6	ա6	բ6	գ6	դ6	ե6	զ6	է6	ը6
5	ա5	բ5	գ5	դ5	ե5	զ5	է5	ը5
4	ա4	բ4	գ4	դ4	ե4	զ4	է4	ը4
3	ա3	բ3	գ3	դ3	ե3	զ3	է3	ը3
2	ա2	բ2	գ2	դ2	ե2	զ2	է2	ը2
1	ա1	բ1	գ1	դ1	ե1	զ1	է1	ը1
	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը

Իրաքանչիւր խաղացող առնում է մի դոյնի 16 ֆիգուրներ. 16 ֆիգուրներից 8-ը կոչվում են զինուորներ՝ ♙ ♟, մի թագաւոր ♔ ♚, մի թագուհի ♕ ♛, երկու աշտարակ ♖ ♜, երկու սպայ ♗ ♝, և երկու ձի ♘ ♞:

(Կըշարունակուի)

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Մէկ բան ունիմ ջըչան ա,
Ջըչանի տակը մէյդան ա,
Մէյդանի տակը զուռնա ա,
Զուռնի տակը մարագ ա,
Մարագը լիգը ուրագ ա։

Մի բան գիտեմ մի վանկանի
Անուն Հայոց ոստիկանի,
Եթէ այն հակառակ կարդաս.
Լրագրի անուն կըստանաս։

Ը Ա. Պ.

ՍՈՐԱՆ Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՏՈՒԻՐԵՍ.

Իմբից մէկին ընտրելով կանգնացնում են առանձին. իսկ իրանք մի տեղ հաւաքվելով, նրանցից մէկը բոլորից մի-մի նըշան է վերցնում։ Այդ նշանները հաւաքում են մէկի գոգնոցում կամ թաշկինակի մէջ։ Յետոյ կանչում են առանձին կանգնածին։ Ում մօտ նշաններ կան, նա հանում է մէկ-մէկ նշանը, իսկ հաւաքողը առնելով այդ նշանները ամեն անգամ հարցնում է եկողին.

«Սորան ի՞նչ կը պատուիրես».

Նա զանազան բաներ է պատուիրում իւրաքանչիւրին, օր. երգել որ և իցէ երգ. մինչև 40, 50, 60 առանց շունչ քաշելու համարել, այնպէս արագ վազել, որ խումբը նորան չըբռնէ, մինչև կըհասնի նշանակած տեղը և այլն և այլն։

Իւրաքանչիւրը ճշտութեամբ կատարում է այն, ինչ որ պատուիրած էր՝ խաղը վերջանում է։

ՕՐ. Մ. Սերերբակեան

ՉՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Ջխտրեդ սաղցրիր և տարար էլ.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ